№ 286 ԵՐԵՔՇԱԲԹԻ 24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ 24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 286

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1914 Թ. ՀԱՄԱՐ

43-ՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

12 և 11 ամիս	10 ամիս	9 ամիս	8 ամիս	7 և 6 ամիս	5 ամիս	4 ամիս	3 ամիս	2 ամիս
10 րուբ.	9 րուբ.	8 րուբ.	7 րուբ.	6 րուբ.	5 րուբ.	4 րուբ.	3 րուբ.	2 րուբ.

Դեկտեմբերի 1-ից մինչև յունվարի 1-ը 85 կոպ.

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կ.։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։

Հին բաժանորդներից խնդրվում է կցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

ՊՐԷՄԻԱՆԵՐ

«Մշակի» ՏԱՐԵԿԱՆ այն բաժանորդները, որոնք 1914 թ. համար (սկսած յունվարի 1-ից 1914 թ.) ՄԻԱՆՈՒԱԳ կամ ՄԱՍ-ՄԱՍ վճարած կունենան 10 րուբլի բաժանորդավճարը, կը ստանան ՁՐԻԱԲԱՐ հետևեալ գրքերից ՄԷԿՆ ՈՒ ՄԷԿԸ.

1) Գր. Արծրունու աշխատութիւնները 1865—1871 թ.

Այդ գրքի մէջ զետեղված են Գր. Արծրունու այն խոշոր ու մանր յօդուածները, որոնք լոյս են տեսել մինչև «Մշակ» լրագրի հրատարակութիւնը։ Գիրքը բաղկացած է 408 էջից։

2) Վրթանէսի (Ա. Փափազեանի) Մանրանկարները, I և II հատոր։

«Մանրանկարները» ամփոփում են իրանց մէջ հայկական հասարակական կեանքի և նրա արտայայտութիւնների նկարագրութիւններ։ Գիրքը բաղկացած է 520+472 էջից։

Մինչև ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-ը բաժանորդագրվածները կը ստանան ԵՐԿՐՈՐԴ գիրքը, իսկ նրանից յետոյ բաժանորդագրվողները—ԱՌԱՋԻՆ գիրքը։

Արտասահմանեան բաժանորդները պէտք է ուղարկեն գրքերի ճանապարհածախքը, որի քանակը կը յայտարարվի իր ժամանակին։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Յովհաննէս և Կարապետ Առաքելեան ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑՆԵՐԸ, Մարգարիտ, Հափսիմէ և Սառա ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑՆԵՐԸ, Եղիսաբէթ ՄԵԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՑԸ իրանց զաւակներով խորին վշտով յայտնում են իրանց ազգականներին և բարեկամներին իրանց թանգագին մօր, գորովագութ սկեսրոջ ու մամի՝

Մարիամ Մարգարեան ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ շաբաթ օրը երկարատև հիւանդութիւնից յետոյ։ Յուղարկաւորութիւնը այսօր, երեքշաբթի, դեկտեմբերի 24-ին, առ. ժամը 10-ին հանգուցեալի բնակարանից (Батумская ул., № 20, Дидубе) դէպի Թանգոյեան ս. Աստուածածնի եկեղեցին։ Թաղումը Կուկիայի գերեզմանատանը։

1211 1—1

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃ

Կիրակի, 29 դեկտեմբերի

ՀԱՄԵՐԳ

Պետերբուրգի Կոնսերվատորիայի պրօֆէսսոր ՅԱՅՏՆԻ ՋՈՒԹԱԿԱՀԱՐ

Յ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ

Ծրագրի մէջ կը մտնեն հետևեալ հեղինակների գործերը. Լէօնիդ Նիկօլայեվ, Ա. Գլազունով, Ի. Վիտոլ, Շոպէն—Վիլհէլմի, Բէթհովէն—Բուրմեստր, Մօցարտ—Բուրմեստր, Կոպտեաև—Նալբանդեան և Բրամս—Իօախիմ։ Մանրամասնութիւնները աֆիշաներում։ Տոմսակները 4 ր. 20 կ.-ից մինչև 75 կ. ծախվում են Կերեբի երաժշտ. խանութում, Գօլովինսկի պրօսպէկտ։

Սկիզբն է 8½ ժամին երեկոյեան։

առ. (Կ.) 1208. 2—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Երկուշաբթի, դեկտեմբերի 30-ին

տեղի կունենայ Մոսկվայի Կայսերական Համալսարանի պրիվատ-դոցենտ

Վ. Օ. ՏՕՏՕՄԵԱՆՑԻ

Դասախօսութիւնը

«ԿԵԱՆՔԻ ԹԱՆԳՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ԴԷՄ ԿՌՒԻ ՄՂԵԼԸ»

թեմայով։

◆ Սկիզբը երեկոյեան ժամը 8½-ին ◆ Տոմսակները 50-ից մինչև 20 կոպ.։ ◆ Միջնակարգ դպրոցների բարձր դասարանների աշակերտները վճարում են միայն տեղի համար, իսկ Ժողովարանի մուտքի համար չեն վճարում. միայն պէտք է ներկայացնել Ժողովարանի գրասենեակին թոյլտուութիւն դպրոցական վարչութիւնից։

Հիւրերը, ըստ յանձնարարութեան, մուտքի համար վճարում են—տղամարդիկ 50-ական կոպ., կանայք և ուսանողները 25-ական կոպ.։

առ. (Կ.) 1210. 2—1

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. ԿԵՕՆՃԵԱՆ

Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացում, (առանց ցաւի)։

Ընդունելութիւն
Ամեն օր (Առաւօտեան ժ. 9—2-ը
(Երեկոյեան ժ. 4—7-ը

Անկիւն Արաս-Երևանսկայա հրապարակի և Լերմոնտովսկայա փողոցի, № 1.

(Ե.Հ.Կ.) առ. 679. 74—42

ԲԺԻՇԿ

Ե. ՔԵՐԵՍՏԷՃԵԱՆ

ՆԵՐՔԻՆ և ՋՂԱՅԻՆ հիւանդութիւններ։
(Առանձն. կրծքի, թոքերի և արեան պակասութեան)

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Ամեն օր (Առաւօտեան ժ. 12—2-ը
(Երեկոյեան ժ. 5—7-ը

Երաֆսկայա, 3 (Լօրիս-Մելիքօվսկայա փողոցի կողմից)

(Ե.Հ.Կ.) առ. 774. 100—41

Բեռլինի համալսարանի

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Վերադառնալով արտասահմանից վերանորոգեց ներքին հիւանդութիւնների ընդունելութիւնը. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՕՏՕՐԱԿՍՈՎ։ Թոքերի և սրտի քննութիւնը լուսաւորված ՌԵՆՏԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ ցեր. և 5—7 ժ. երեկոյեան. ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ ԱՌ. Ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская 23, тел. 7—92.

(ա.օ.) առ. 977 100—43

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՀԱՐՈՒՍՏՆԵՐ

II

Անցեալ անգամ մենք զուգահեռական անցկացրինք հին և նոր հարուստների միջև։

Հին և նոր սերունդի հարուստների մասին է մեր խօսքը։ Եւ անշուշտ, հին սերնդին են պատկանում այն մի քանի հարուստները, որոնք հանդէս են եկել բարեգործութեան ասպարէզում իբրև նուիրատուներ, ինչպէս Լազարեաններ, Ռաֆայէլեան, Մուրադեան, Սանասարեան, Մանթաշեան, Աբամեան, Մելիք-Ազարեան, Ղուկասեաններ, Արզումանեան, Ժամհարեաններ, Քանանեան, Թորոսեաններ, Աւան-Իւզբաշեան, Աֆրիկեան։ Եւ մեր խօսքը այդպիսի հարուստների մասին չէ, որոնց ամեն մէկը իր չափով, թէև ամենքը գուցէ ոչ այն չափով, որով կարող էին, կատարել են բարեգործութիւններ, հետևաբար, որոշ չափով կատարել են իրանց ազգային և մարդկային պարտականութիւնը։ Դրանք ամենքը դարձեալ պատկանում են հին սերունդի հարուստներին։ Մեր խօսքը և մեր պախարակումը նոր սերունդի հարուստների մասին է։

Վերջին 20—30 [illegible] քում մեր մէջ [illegible] ների մի բաւական ստուար խումբ, որոնց անունը բնաւ չէ լսվում որևէ հասարակական, բարեգործական, ազգային հանգանակութեան դէպքում։ Հարիւրաւոր հարուստ ինժեներներ, տեխնօլօգներ, բժիշկներ, փաստաբաններ և վաճառականներ կան, որոնք բնաւ չեն մասնակցում որևէ հանգանակութեան, կատարեալ անտարբեր են մնում դէպի բարեգործութիւնը կամ տալիս են գրօշներ, կոպէկներ, չը նայելով որ տարեկան տասնեակ հազարներ են աշխատում։

Տարօրինակ երևոյթ է ներկայացնում մեր կեանքը, օրինակ Թիֆլիսում և Բագւում։ Այդ երկու քաղաքներում էլ, երբ որևէ մի հանգանակութիւն է պէտք լինում կատարել, որևէ մի ազգային, հասարակական, բարեգործական կարիք է երևան գալիս, միշտ դիմում են մի շատ որոշ և սահմանափակ թւով հարուստների խմբի—Մանթաշեան, Աւ.-Իւզբաշեան, Մելիք-Ազարեան, Արամեան, Աֆրիկեան, Միլեան, Մ. Քալանթարեան (Թիֆլիսում), Ղուկասեան, Վաչեան, Տէր-Մարգարեան, Սարգսեան և մի քանի այլ անձինք (Բագւում)։ Եւ բնական է, որ յաճախ հանգանակութիւնը, երբ նոյնիսկ ամենակարևոր և անյետաձգելի կարիքի համար է, շատ քիչ արդիւնք է տալիս, որովհետև տուողները միշտ միևնոյն անձինքն են։ Բայց չէ՞ որ թէ Թիֆլիսում, թէ Բագւում կան հարիւրաւոր, նոյնիսկ հազարաւոր շատ լաւ ապահովեալ, շատ բարեկեցիկ, տարեկան հազարներ, տասնեակ հազարներ վաստակող ինժէնէրներ, տեխնօլօգներ, բժիշկներ, փաստաբաններ։

Եւ ահա այդ նոր սերունդի, նոր ֆօրմացիայի հարուստները միանգամայն հեռու են պահում իրանց բարեգործական ասպարէզից, չը նայելով որ իբրև կրթեալ և ուսումն ստացած շատերը, նոյնիսկ բարձր ուսումն ստացած, աւելի գիտակից և խղճահար պէտք է լինէին իրանց ազգային և մարդկային պարտականութիւնները կատարելու մասին։ Այդ նոր ֆօրմացիայի հարուստների, պատէնտաւոր և դիպլօմաւոր ուսումն ստացած հարուստների մէջ դուք կը գտնէք անձինք, որոնք շիկ են համարում տօնել իրանց ընտանեկան այս ու այն տօնախմբութիւնը դղրդալից կերպով, հարիւրաւոր հրաւիրեալների ներկայութեամբ, հարիւրներ չեն խնայում արտիստներ, երգչուհիներ հրաւիրելու, մի երեկոյ հազարներ են ծախսում, բայց երբ հրապարակի վրա է դրված լինում մի ազգային կամ հասարակական հանգանակութիւն, կամ բոլորովին անտարբեր են մնում, ինքնաբերաբար ոչինչ չեն նուիրում, իսկ երբ դիմում են նրանց, տալիս են առ առաւելն 10—25 ր.։

Եթէ Բագւի, Թիֆլիսի մեր բոլոր հայ բարեկեցիկ, դիպլօմաւոր ինժենէրները, տեխնօլօգները, փաստաբանները, բժիշկները, ինտելիգենտ վաճառականները մի-մի հարիւր րուբլի տուած լինէին, հազարներ կը հանգանակուէր։

Դրանից յետոյ գալիս է արդէն բոլորովին նոր սերունդը, հարուստների զաւակները, որոնք՝ շնորհիւ իրանց ստացած վատ կրթութեան և դաստիարակութեան՝ կեանքի միակ արժէքը, իմաստը տեսնում են հաճոյքների, ցոփ և շուայտ կենցաղավարութեան մէջ, հազարներ, տասնեակ հազարներ են ծախսում իրանց կառքերի, սիրուհիների, սպորտների վրա, բայց կոպէկ չեն տալիս որևէ բարեգործական, մարդասիրական, ազգասիրական նպատակով։ Դրանք իրանց հայրերի դիզած հարստութիւնը խժռողներն են, գուցէ պատժել տալու համար իրանց հայրերին, որոնք խելամուտ չեղան թէ այլ կերպ պէտք էր կարգադրէին իրանց հարստութիւնը։

Եւ վերջ ի վերջոյ մենք կանգնած ենք այսպիսի երևոյթի առաջ. հայը՝ բարեգործութիւն քիչ է անում, անողներն էլ հին սերունդի մարդիկ են, անուսումն, յաճախ անգրագէտ մարդիկ, վաճառականներ։ Նոր սերունդի հարուստները, որոնց մեծ մասը ուսումն և կրթութիւն են ստացել, բարեգործութեան կողմից աւելի ստոր աստիճանի վրա են կանգնած։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

21 և 22 դեկտեմբերի

Պետերբուրգ.—Ռօդզեանկօն մեկնեց Ցարսկոյէ-Սէլօ և ընդունվեց կայսրից 1½ ժամ ունկնդրութեան, որի ժամանակ նա լիակատար զեկուցում ներկայացրեց Նորին Մեծութեանը Պետական Դումայի աշխատանքների մասին։

Պարիզ.—«Matin»-ի տեղեկութիւնների համաձայն՝ շատ հաւանական է, Պուանկարէն 1914 թ. ամառը այցելէ Ռուսաստան։ Պրեզիդենտին ուղեկցելու են մի քանի զրահանաւ և Միջերկրականի նաւատորմի մի մասը։ Լրագիրների ասելով, պրեզիդենտը բուռն ցանկութիւն է յայտնել՝ ներկայ լինելու ռուսաց զօրքի զօրախաղերին։

Պարիզ.—«Թանը» կարծում է, որ Պուանկարէն կը մեկնէ Ռուսաստան մայիսի կամ յուլիսի սկզբին։

Կ. Պօլիս.—Օսմանեան գործակալութիւնը հաղորդում է, որ զինուորական մինիստր Իզզէթ-փաշան հրաժարական տուեց։ Նրա պորտֆէյլը հաւանօրէն կառաջարկվի Էնվէր-բէյին։

Կ. Պօլիս.—Հրատարակվեց սուլթանի իրադէն՝ Էնվէր-բէյին զինուորական մինիստր նշանակելու մասին։

Թաւրիզ.—Ընդհարում տեղի ունեցաւ երկու դպրոցի աստուածաբան ուսանողների միջև։ Կան վիրաւորներ։ Կարգ ու կանոնը վերականգնեց ոստիկանութիւնը։

Սպահան.—Գլխաւոր գանձապահի ներկայացուցիչը ստացաւ պաշտօնական ճշգումն, թէ գեներալ նահանգապետ նշանակվել է Սամսամ-ուս-Սալթանէն, որին տրված է ռոճիկ մեծ չափով, քան նրա նախորդը ունէր։

Հռոմ.—«Tribuna»-ն հաստատում է այն լուրը, որ Սան-Ջուլիանօն առաջիկայում այցելելու է Վիեննա։

Նիւ-Եօրկ.—Օխինագի մօտ չորս օր տևող ճակատամարտից յետոյ ապստամբները նահանջեցին և այժմ սպասում են ռազմամթերքի Չիխուախուայից։ Ապստամբների կորուստներն աւելի մեծ են, քան ֆեդերատիվ զօրքերի, որոնք կորցրին 100 մարդ։

Պրեզիդիօ (Տէխաս).—Օխինագի մօտ տեղի ունեցած ճակատամարտից յետոյ, 200 մեքսիկացի, որոնց թւում հաշմանդամ կանայք և երեխաներ, անցան Միացեալ Պետութիւնների սահմանները, որոնելով պաշտպանութիւն ամերիկական զօրքերից կռւի սարսափներից յետոյ։ Ամերիկական իշխանութիւնները դէպի այդ փախստականները վերաբերվեցին ինչպէս փախստական զինուորների։

Հէլպօրտ (Միսիսիպի).— Վիլսօնը յայտնեց, որ նրա խօսակցութիւնը Մեքսիկայի ներկայացուցիչ Լինդի հետ ոչ մի փոփոխութիւն չի մտցնի կառավարութեան քաղաքականութեան մէջ Մեքսիկայի վերաբերութեամբ։ Մտադրութիւն չը կայ նաև փոփոխութիւն մտցնել գործողութիւնների ծրագրի մէջ և որևէ նոր քայլ անել ներկայումս։

Ռաբատ.—Ժողովրդական սրճարաններից մէկի վրա փլվեց ժայռի մի կտոր. առ այժմ հանել են 22 դիակ։

Կուլջա.—Մուսաբաէվի քարածխահանքում պայթումից մահացան 16 մարդ։

Տօկիօ.—«Իօրօզգու» լրագիրը փան- [illegible] դաշնակցութեան մասին տարածված լուրերը։

Կահիրէ.—Տուրայի բանտում ապստամբվեցին 1300 աքսորականներ։ Բանտային պահակախումբը ստիպված էր գործի հանել զէնք։ Բանտային 18 պահապան և մի օֆիցեր վիրաւորվեցին, 4 աքսորական սպանվեցին, 53 վիրաւորվեցին։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

21 և 22 դեկտեմբերի

Սօֆիա.—Սերբ-բուլղարական դաշնակցութեանը նուիրված յօդուածում Հռոմի բուլղարական դեսպանը այն կարծիքն է յայտնում, որ այդ դաշնակցութեան քայքայումը օրհասական կը լինէր Սերբիայի համար, նաև նրա բարեկամների համար, որոնք կամենում են Սերբիայից դարձնել մեծ պետութիւն միացնելով նրան օտար երկիրներ։ Բոլոր այդ սլաւօն եղբայրները շուտով կը համոզվեն, որ մեծ մեղք են կատարել սլաւօնականութեան վերաբերմամբ և սխալ, որի ծանր հետևանքները կը զգան հէնց իրանք։

Սօֆիա.—Էկզարխ Յովսէփը յանուն բուլղար հոգևորականութեան և հօտի արձակած կոնդակում դատապարտում է այն անձանց փոքրոգութիւնը, որոնք պատերազմի դժբաղդութիւններից յետոյ փոխանակ փրկութիւն որոնելու ուղղափառ հաւատում, դիմում են հռոմէական եկեղեցու առաքեալներին։ «Բուլղար ազգի փրկութիւնը,—ասում է էկզարխը,—ուղղափառութեան և սլաւօնականութեան մէջ է, որոնց գլուխ կանգնած է մեծ Ռուսաստանը»։

Բէլգրադ.—Ազգային ժողովի նիստում Ռադօսլավօվը յայտնեց, որ մինիստրութիւնը հրաժարական է տալիս։ Ժողովը նիստերը յետաձգեց մինչև նոր կաբինէտ կազմելը։

Բէլգրադ.—Եկաւ գեներալ Հօլմսէնը և ընդունվեց թագաւորից և Պաշիչից։

Բէլգրադ.—Սկուպշտինան ընդունեց բիւջէի 2/12-րդ մասը և նիստերը յետաձգեց մինչև յունվարի 22-ը։

Թագաւորի, գահաժառանգի, մինիստրների, բարձրաստիճան քաղաքացիական պաշտօնեաների և բազմաթիւ ազօթողների ներկայութեամբ կայացաւ հոգեհանգիստ պատերազմներում ընկած զօրականների յիշատակին։

—

Սկօպլէ.—Զինւորացու երիտասարդներին ծառայութեան կանչող մասնաժողովը սկսեց իր գործողութիւնները նոր նուաճված երկիրներում։ Մահմեդականներն առ այժմ չեն կանչվում ծառայութեան։

—

Բուխարէստ.—Մայորէսկուն, պատգամաւորների պալատում պարզելով կառավարութեան քաղաքականութիւնը, հռետորների յարձակումները Աւստրիայի վրա ընդունեց սխալ, որովհետև չէ կարելի խառնել աւստրիական քաղաքականութիւնը ունգարական օպպօզիցիայի քաղաքականութեան հետ։

Պալատն ընդունեց պատասխան-ուղերձը հանդէպ գահական ճառի։

—

Վիէննա.—«Պոլիտիշէ-Կոր.»-ի տեղեկութիւնների համաձայն, ժամանակաւոր ալբանական կառավարութեան պրեզիդենտ Իզմայիլ-Քէմալը Բերխտոլդին ուղարկել է ողջոյնի հեռագիր Նոր Տարվայ առիթով, յայտնելով ալբան ժողովրդի շնորհակալութիւնը սահմանադրութիւն և անկախութիւն ստանալուն համար։

Բերխտոլդը իր պատասխանի մէջ ցանկանում է բարեկեցութիւն քաջարի ալբան ժողովրդին։

—

Բերլին.—«Նորդ-Դայտշէ-Ալգ.-Ցայտունգը» հաղորդում է, որ Գրէյի առաջարկութեանը երրեակ դաշնակցութեան պետութիւնները համաձայնել են երկարել Հարաւային Ալբանիայից յոյն զօրքերի հեռանալու ժամանակը մինչև յունվարի 5-ը։ Այդ ժամանակամիջոցում կազմակերպվելու է ալբանական ժանդարմերիան, նաև մեծ պետութիւնները բանակցելու են Եգէյեան կղզիների նկատմամբ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՌԷՖՈՐՄՆԵՐԸ

Новое Время թերթի մէջ (դեկտ. 19-ին) տպված են հետևեալ տեղեկութիւնները.

«Ինչպէս յայտնի է, այս օրերս ռուսաց և գերմանական դեսպանները խորհրդակցութիւն ունեցան մեծ վեզիրի հետ հայկական վիլայէթների ռէֆօրմների ծրագրի մասին։

«Մ. Գիրս և բարօն Վանգէնհէյմ ներկայացրին մեծ վեզիրին միասին մշակած ծրագիրը, որ քննութեան առարկայ դարձաւ մինիստրների վերջին խորհրդակցութեան մէջ Կ. Պոլսում։

«Այդ առիթով մեզ հաղորդում են, որ լիակատար հաւաստիք կայ, թէ ռուս-գերմանական առաջարկութիւնը կընդունվի Բ. Դրան կողմից։ Թիւրքիան ամենից առաջ նշանաւոր զիջումներ է ձեռք բերել Ռուսաստանի և Գերմանիայի կողմից, իսկ յետոյ շատ ազդեցիկ օսմանեան քաղաքական գործիչներ իրանք ընդունել են, որ իրերի դրութիւնը Հայաստանում կարող է վերջ ի վերջոյ ստեղծել իրա՝ Թիւրքիայի համար շատ մեծ բարդութիւններ։

«Ահա երկու հիմք, թէ ինչու այժմ ռուս-գերմանական ծրագիրը համակրութիւն է գտնում Թիւրքաց կառավարչական շրջաններ կողմից։

«Բանակցութիւնների շրջանում Ռուսաստանի և Գերմանիայի հետ, Թիւրքիան այնուամենայնիւ աշխատեց, որ իր ինքնակողմից շահագրգռված դիպլօմատիան զիջումներ անեց։

«Անցեալ շաբաթվայ վերջին, մեծ վեզիրի մերձաւորները երկարատև խորհրդակցութիւն ունեցան հայկական գաղութի ազդեցիկ անդամների հետ և յայտնեցին վերջիններին, թէ Բ. Դուռը, մանրամասն քննելով հայերի դրութիւնը, որոշել է գործադրել ռէֆօրմները։

«Հայկական վիլայէթներում, Բ. Դրան ցանկութեան համաձայն,—յայտնեցին մեծ վեզիրի պաշտօնեաները,—կը նշանակվեն առանձին տեսուչներ, որոնք կը հսկեն ռէֆօրմների գործադրութեան վրա։ Բացի այդ տեսուչներից՝ վիլայէթներում կը գտնվեն և եւրոպացի խորհրդականներ։ Տեսուչների նշանակումը Թիւրքիան մտադիր է կատարել հայ ժողովրդի համաձայնութեամբ։

«Հայերին յայտարարվեց, որ Թիւրքաց կենտրոնական կառավարութիւնը մտադիր է դարձնել ամենալուրջ ուշադրութիւն հողային հարցի վրա և այդ առիթով շուտով տեղի կունենան խորհրդակցութիւններ հայ ազգաբնակութեան ներկայացուցիչների մասնակցութեամբ։ Հայ ժողովուրդը ներկայացուցիչներ կունենայ պարլամենտում։

«Այդ ծրագիրը ընդունվեց հայ ժողովրդի կողմից մեծ համակրութեամբ, ենա յայտնվեց ընդհանուր գծերով ռուսական և գերմանական դեսպաններին»։

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Պետերբուրգ, 17 դեկտ.

Ռուս առաջադիմական հասարակական գործիչների խումբն երէկ երեկոյ, դեկտ. 16-ին, մի նոր ժողով էր գումարել պ. Բրեանչանինովի տանը, պրօֆ. Մ. Պ. Զուբինսկիի նախագահութեամբ։ Հայերից ևս հրաւիրված էին և ներկայ 4 հոգի, որոնց երեքը նախկին մասնակցողներից և չորրորդը նոր էր գալիս ուղղակի Կ. Պոլսից։

Ժողովը լսեց պրօֆէսօր Պլէտնևի մի ընդարձակ զեկուցումը ռուս-թիւրքական յարաբերութիւնների մասին։ Զեկուցանողը մանրամասն կերպով ուսումնասիրել էր մանաւանդ Գերմանիայի ձգտումը տնտեսական շահերի միջոցով իր ազդեցութեան տակ առնել Փոքր Ասիան և երկաթուղային ցանցով արգելք հանդիսանալ Ռուսաստանի առաջխաղացման։ Խօսելով Փոքր Ասիայի ժողովուրդների մասին, եւրոպական քաղաքակրթութիւնն իւրացնելու ընդունակ միակ տեղական տարր համարեց հայ ցեղը և պահանջեց, որ Ռուսաստանն ամեն միջոց գործ դնէ նրա ցեղական և հողային ինքնավարութիւնը ապահովելու համար, որին խանգարում է Գերմանիան։ Պրօֆէսօրը օրինակներով ցոյց տուեց, թէ այն եւրոպական պետութիւններն, որոնք ուժեղ են և իրօք ցանկանում են իրանց ծրագրած նպատակին հասնել ինչպիսի՛ կտրուկ ճանապարհներ են ընտրում, և երբէք չեն ընկրկում...։

Պ. Պլէտնևի այս բովանդակալից զեկուցման հետևեցին վիճաբանութիւններ, որոնք լուսաբանում էին յարուցված խնդրի զանազան մասերը կամ լրացնում էին թերի կողմերը։ Վերջը, նախագահի հրաւէրով՝ խօսեց Կ. Պոլսից նոր վերադարձած անձն, որ շատ որոշ կերպով պարզեց Թիւրքիայի ներքին կացութիւնը, տեղական ցեղերի փոխադարձ յարաբերութիւնը և յայտնեց այն միտքը թէ երիտասարդ Թիւրքերը դիմում են Գերմանիայի աջակցութեան ոչ թէ բուն երկրի կամ օսմանեան պետութեան օգտի համար, այլ Թիւրք ցեղի անձուկ շահերի տեսակէտից, քանի որ բուն Թիւրքերը փոքրամասնութիւն են կազմում, միւս կողմից արաբ տարրն սկսել է գերակշռող դեր խաղալ։ Յատկապէս հայկական հարցի համար նա ասաց, թէ այժմ բոլոր հայերս և նրանց քաղաքական կուսակցութիւնները միացած են և համերաշխ են գործում։ Հայերն, աւելացրեց զեկուցանողը, շարունակում են իրանց յոյսը դնել ռուսական միջամտութեան վրա յօգուտ հայկական բարենորոգումների և չեն նահանջում այդ շաւղից։ Բայց նրանց գործը սկսել է շատ դժուարանալ այս միջոցին, որովհետև Թիւրք կառավարութեան անդամները հայոց հետ տեսակցութեան ժամանակ պահանջում են, որ օտար միջամտութեան վրա յոյս չը դնելով վստահեն կառավարութեան խոստումներին և մինչև իսկ խուլ սպառնալիքներ ևս լինում են. հայերը թէև չեն զիջում կառավարութեան, բայց միւս կողմից չեն իմանում, թէ Ռուսաստանը պատրա՞ստ է մինչեւ վերջ պաշտպանել իր պահանջած եւրոպական հսկողութիւնը։ Այս վիճակն անհանգստացնում է նրանց։

Այնուհետև խօսեցին մի լեհացի և չերնոգորցի գեներալ, առաջինը ընդդէմ գերմանական ոտնձգումների, իսկ երկրորդը առիթից օգտուելով քաղեց բալկանեան սլաւոնական շահերի տեսակէտը առաջ մղելու։

Վերջը կազմվեց ընդհանուր եզրակացութիւն, որ այսօր հրատարակված է «Веч. Вр.»-ում («Нов. Вр.»-ի երեկոյեան հրատարակութիւնը). իսկ վաղը լոյս կը տեսնէ միւս թերթերում։

Ուղարկում եմ ձեզ «Веч. Вр.»-ի յօդուածն այս առիթով, «Մշակի» մէջ հրատարակելու համար։ Այդտեղ առանձնապէս շեշտված է այս սպառնալիքը, բայց ես կարծում եմ, թէ այդ պարզապէս մի bluff է Ջէմալ-բէյի կողմից և չէր արժի լուրջ նշանակութիւն տալ նրան, մանաւանդ որ ինքը Ջէմալ-բէյը շատ առիթներում թէ իբրև Ադանայի նահանգապետ (կոտորածից յետոյ) և թէ իբրև Կ. Պոլսի զօրքի հրամանատար միշտ բարեացակամ վերաբերմունք է ունեցել հայոց նկատմամբ։

Ժողովի վերջում մասնակցողներին բաժանում էին «Вѣстникъ Міра» ամսաթերթի վերջին VI համարն, որտեղ մի առաջնորդող կայ հայկական հարցի մասին։ Ռուս ծանօթ խմբագիրը իր այդ յօդուածում գտնում է, թէ անհրաժեշտ է «Հայ-Ռուսական Միութիւն» (Армяно-Русская Лига) կազմել Թիւրքահայաստանի բարենորոգումները պաշտպանելու և ռուսական հասարակական կարծիքն իրազեկ պահելու, թէ ինչ է իսկապէս կատարվում Հայաստանում։ Ս.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ

Շաբաթ, դեկտ. 21-ին, երեկոյեան ժամը 8-ին, Ալ. Մելիք-Ազարեանցի բնակարանում տեղի ունեցաւ Նպաստամատոյց Յանձնաժողովի նիստը, ուր վերջնականապէս խմբագրվեց գործերը լիկվիդացիայի ենթարկելու որոշումը և արձանագրութիւնը։ Պարզվեց, որ կանխիկ դրամ կայ 80,500 րուբլի։ Որոշվեց այդ գումարից 500 ր., ինչպէս և բանկից ստանալի երկու ամսվայ տոկոսիքը պահել մի քանի ծախսերի (3 որբերի պահպանութեան և այլն) համար, իսկ մնացորդ 80,000 րուբլին վերածել օբլիգացիաների, գնելով Թիֆլիսի քաղաքային վարկի ընկերութեան 5%-աբեր օբլիգացիաներ, և ուղարկել Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ի կատարումն Նորին Վեհափառութեան կոնդակի, որով պահանջվել է այդ գումարը՝ դպրոցական ֆօնդին յատկացնելու նպատակով։ Ուղարկելով գումարը Կաթողիկոսին, Յանձնաժողովը զեկուցանելու է, որ թէ իր կարծիքով և թէ հրաւիրված իրաւագէտների կարծիքով, գումարը պէտք է գործադրվի այն նպատակին, որի համար հանգանակված է։

Այս կէտը լուսաբանելու համար պէտք է յայտնենք, որ Յանձնաժողովը պատրաստ էր այդպիսի կարծիք յայտնել, սակայն Կաթողիկոսը, երբև տէր և տնօրէն այդ գումարի և պատասխանատու նուիրատուների առաջ, կարող է, ի հարկէ, իր պատասխանատուութեամբ, յատկացնել գումարը այլ բարեգործական նպատակի, ներկայ դէպքում՝ դպրոցական ֆօնդի օգտին, որի նպատակն է, ինչպէս շատ լաւ բացատրել է Կաթողիկոսը, հայ ժողովուրդը հոգեւոր-մտաւոր սովից ազատել։

Վերջնական հաշւեյարդարութիւնը, որ երէկ կատարվեց Թիֆլիսի առևտր. բանկում, ցոյց տուեց, որ կայ պատրաստի գումար 83,120 ր., այս գումարից 82,332 ր. տրվեց և գնվեց օբլիգացիաներ 94,600 րուբլու, և այս գումարը դրվեց ի պահեստ Թիֆլիսի առևտր. բանկում Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունով, իսկ մնացորդը 787 ր. պահվեց լինելիք ծախսերի համար։

Եւ այսպէս, կենտրոն. Նպաստամատոյց Յանձնաժողովը, ամբողջ 8 տարի գործելուց յետոյ յօգուտ հայ գիւղացիութեան, դարմանելով նրա կրած աղէտները, հանգանակելով և գործադրելով 450,000 րուբլի, վերջ տուեց իր գործունէութեան, ներկայացնելով Կաթողիկոսին 94,600 ր. խնայած գումար՝ որ դարձեալ պէտք է գործադրվի յօգուտ նոյն ժողովրդի։

ՄԻ ԲԱՆԱԿՌՈՒԻ ԱՌԻԹՈՎ

«Հորիզոնի» խմբագիրները իրանց հովանաւորութեան տակ են առել հայ գրողներին [illegible] Գ. Արծրունու յարձակումների առիթով։

Բայց այդ պաշտպանողականը հիմնված է մի շատ սխալ հողի վրա։ Իբր թէ «Մշակը» իր հիմնադրի օրով և այժմ էլ միշտ թշնամի է եղել հայ գրողներին, հայկական ինքնուրոյնութեանը, որ նա եղել է օտարամոլ։ Բայց հետաքրքրական է իմանալ, թէ այդ ո՞ր օրից է, որ մի որևէ հիմնարկութեան կամ նոյնիսկ անձնաւորութեան վրա յարձակվելը պէտք է թշնամութեան արգասիք համարել։ Այդ ո՞ր օրից է, որ ձգտումը դէպի լայն զարգացում, լայն աշխարհահայեացքի ստեղծումը, նուրբ գեղարուեստական ճաշակի զարգացումը—ինչ որ հնարաւոր է միայն եւրոպական քաղաքակրթութեանն անմիջապէս ծանօթանալու և իւրացնելու շնորհիւ—օտարամոլութիւն է համարվում։

Որ հայ ուսուցիչը, հայ գրողը իր մեծամասնութեամբ տգէտ է, բոբիկ, կոպիտ ճաշակով, զուրկ եւրոպական քաղաքակրթութեան իւրացումից, այլ միայն ծանօթ վերջինիս հետ հարևանցի առօրեայ համբաւվայելող, ասպարէզի վրա գտնվող հեղինակների շնորհիւ, դա մի ցաւալի փաստ է, որի դէմ կռւելը, որի մասին յիշեցնելը՝ հայ մամուլի բարոյական պարտականութիւնը պէտք է լինի։

Հայ ուսուցիչը ոչինչ չէ կարդում։ Ուսուցչական Միութիւնը իր օրհասի մէջն է. նրա օրգանը հազիւ թէ մի քանի տասնեակ ուսուցիչ բաժանորդ ունի։

Ի՞նչ են ներկայացնում այն հիմնարկութիւնները, որոնց վարիչներն են հանդիսանում հայ գրողները և հայ ուսուցիչները։

Վերցրէք հէնց Կ. Հ. Հրատարակչ. Ընկերութիւնը, որը 3—4 տարվայ ընթացքում ծախսել է 25,000—30,000 ր.։ Ի՞նչ է տուել նա հայ գրականութեանը։ Ինքնուրոյն աշխատութիւնների շարքում դուք կը գտնէք Վալադեանի «Բժիշկ» դրաման, Ն. Աթայեանի «Թերուս կնոջ խոստովանանքը», «Ցանցանքը», Մովսէս Ղուկասեանի «Նահապետական տունը» և նման մի շարք հակագեղարուեստական և տաղտկալի գրուածքներ, ինչպէս և Սէյրիի «Ծիլ ու ծաղիկ» նման թոյլ և սկսնակ փորձեր։ Իսկ թարգմանականների շարքում՝ Գաբրիէլ դ'Աննունցիոյի «Ջիոկոնդան», Իւշկևիչի «Թագաւորը», Կնուտ Համսունի «Պանը» և մի շարք նորագոյն և նորաձև գրուածքներ, որոնց մասին մի քանի տարի յետոյ՝ շատ քիչերը պիտի յիշեն։ Եւ այդ բոլորը՝ շատ վատ թարգմանված, մի բան՝ որ ապացուցանում է, թէ թարգմանիչները բոբիկ են ինչպէս բնագրի լեզուին, նոյնպէս և—ինչ որ ամենացաւալին է—հայերէնին։

Մեր նպատակը այդ աշխատութիւնները քննադատելը չէ և ոչ էլ այն, թէ մեր գրողները, թարգմանիչները և ուսուցիչները՝ ըստ մեծի մասին՝ տգէտ, անճաշակ և նեղ աշխարհահայեացքի տէր մարդիկ են։ Մենք կուզէինք ցոյց տալ, թէ նոյնիսկ այդ պարոնները համախմբվելով և տարիների ընթացքում նուիրելով իրանց ուժը մի գործի—ինչպէս Հրատարակչ. Ընկ. խմբագրական յանձնաժողովի—մնում են միևնոյն թերուսը, անճաշակը և բոբիկը, ինչպէս իրանց անհատական գործունէութեան մէջ։

Ջէ՞ որ այդ խմբագրական մարմինը բացառապէս կազմված է հայ գրողներից և ուսուցիչներից։

Եթէ Գր. Արծրունին քննադատում էր իր ժամանակի գրողներին, որոնք գոնէ հայերէն գիտէին, օտար լեզուների ուսումնասիրութեան լուրջ էին վերաբերվում, որոնց շարքում կային Բարխուդարեանի, Մսերեանի, Փ. Վարդանեանի պէս թարգմանիչներ, ինչ պիտի անէր նա, եթէ իր առաջ ունենար պ. Ալթունեանի պէս մի թարգմանիչ և «Ուրուականների» պէս մի թարգմանութիւն։ Իրազեկ

ՀՈՂԻ ԿՐԻԶԻՍԸ

Քանի դեռ բամբակագործութիւնը մուտք չէր գործել Բօրչալուի գաւառը, հողերի արժէքն այնչափ ընկած էր, որ ոչ ոքի մըտքով չէր կարող անցնել, թէ այսօրվայ հողի կրիզիսին կենթարկվենք։

Սրանից 5—6 տարի առաջ, երբ վաճառվում էր Ծուրինեանի «Մամայլու» կալուածքը, այդ հողը գնելու համար Եփրեմ Ծատուրեանը և Պետրոս Յակոբեանը, որպէս իրանց գիւղացու ջերմ բարեկամներ, քանիցս անգամ դիմեցին Շուլաւէրի շինականներին այդ հողը գնելու, որպէսզի ապագայում հողազուրկ չը մնայ մեր գեղջուկը։ Թէև սկզբից գիւղացիները տրամադրվեցին այդ հողը գնելու, սակայն մի քանի չարախօս անհատների յորդորանքով ետ կանգնեցին՝ լայն ասպարէզ տալով ոչ-հողագործ դասակարգին պատկանող անհատներին՝ գնելու յիշածս կալուածքը։

Այդ սխալը կարծես բաւական չէր, նորից մի ուրիշ սխալ ևս գործեցին։ 4 տարի առաջ իշխան Դաւիթ Ցիցիանովը վաճառում էր իր կալուածքը, որը Մամայլուի կէս մասն է և կազմում է 800 դեսեատին ջրովի և անջրդի հողեր։ Կալուածատէրն առաջարկում էր դեսեատինին 40 րուբլի և պահանջում էր կանխիկ վճարել 10,000 րուբ., իսկ մնացած գումարի դիմաց՝ նոյն կալուածքը չնչին տոկոսով գրաւ էր վերցնում իր մօտ։ Այնքան կուրացանք, որ չը կարողացանք համերաշխութեան գալ [illegible] վեցլինք, որ գտնվում էր Շուլաւէրից 5 վերստ հեռաւորութեան վրա։ Այդ կալուածքը գնեցին դեսեատինը 70 ր.՝ սրանից 3 տարի առաջ՝ այդ կալուածքում բնակվող Գեաուր-արխի թուրք գիւղացիները գիւղական բանկի միջոցով։ Այժմս բամբակ ցանելու համար այդ իսկ թուրքերը մեզանից վերցնում են մի դեսեատին հողի համար 45—50 րուբ. կապալադրամ, այս երեք տարում իրանց վճարած փողը ստացան, ու կալուածքը համարեա ձրի մնաց նրանց։ Նոր վայ ենք տալիս գլխներիս, սակայն ուշ է. լաւ են ասել, որ «հայի յետի խելքը իմս պտէր»։

Այժմս բամբակագործութեամբ պարապում են՝ և՛ թուրք գիւղացիք, և՛ ինժեներները, և՛ գիւղատնտեսը, և՛ վաճառականը, և՛ չինովնիկը, և՛ քահանան և հանքաբանը. մի խօսքով եթէ ազատ հող գտնվէր, մի խումբ կանայք ուզում էին ընկերութիւն կազմել և այդ գործով պարապել։

Բօրչալուի I գաւառամասում բամբակագործութեան համար ամենայարմար և արդիւնաւէտ հողերը կազմում են Մամայլուն, Ցիցիանովի Գեաուր-արխ և Ախլուն, Անանեանի Վերի-Սարալը, իշխ. Սումբաթովի Լամբալուն, որպիսի հողերը տալիս են 100 պուդ չը մաքրած հում բամբակ, աջող տարիներին նոյնիսկ և աւելի։ Երկրորդ տեղը կարելի է տալ Արամեանի Լէչքաղին և Մանթաշեանի Թաքալուից սկսած մինչև Աշաղա-Սարալ կայարանի մօտ տարածվող հողամասերին, որոնք միջին թւով տալիս են 70 պուդ։ Երրորդ տեղը կարելի է տալ ուզէնի, Միրզոյեանի նախկին կալուածքին, որ գնել են թուրք գիւղացիք և Երևանի նահանգից գաղթած հայ և ասորի գիւղացիները, և որտեղից ստացվում է 50—60 պուդ։

Բօրչալուի այն մասերում, ուր բամբակ է բուսնում, ոչ մի կտոր ազատ հող չի մնացել, որ նոր խելքի եկած շուլաւէրցիները գնեն՝ այդ արդիւնաւէտ գործը ձեռքից չը գցելու համար։

Շուլաւէրցիք, որ ամեն կողմից զրկված են իրանց անհեռատեսութեան պատճառով, այժմս վերջին միջոցին են դիմում, եթէ ի հարկէ գոնէ այդ էլ աջողվի։

Շուլաւէրի վարելահողերը, ըստ «ուստաւնոյ գրամօտի», կազմում է ջրովի թէ անջրդի 2116 դես.։ Դրան գիւղացիները արօտատեղից աւելացրել են մօտաւորապէս 300 դես. և մօտ 300—400 դես. էլ իշխան Թումանեանից գնած Սպիտակ Շէնի վարելահողը. բացի դրանցից՝ կան և 350 դես. Փոքր Շուլաւէրի և 80 դես. «Ագնիսի հողերը»։ Ուրեմն մօտ 3146 դես.։ Եթէ այդ հողերի որակը վերցնենք, առաջին տեղը կարելի է տալ արդիւնաբերութեան կողմից. սակայն ջուր չը լինելու պատճառով զրկված է թէ բամբակագործութեան և թէ այլ օգտաւէտ աշխատանքից։

Ի նկատի առնելով իր այդ անյետաձգելի կարիքը, հասարակութիւնն իր համագումար ժողովում համախոսակամով 5 լիազօր շուլաւէրցիներ ընտրեց, լիազօրելով որ հասարակութեան անունից մի որևէ ընկերութեան հետ պայման կապեն «Դեբեդաչայից» ջուր բարձրացնելու վերև յիշածս հողերը ոռոգելու համար։

Շուլաւէրցիք 25,000—30,000 րուբլի ծախսելով առողջարար աղբիւրի ջուր բերին գիւղը։ Այդ գեղեցիկ գործը գիւղացոց համոզեց, որ ոչ մի միջոցի առաջ չը պէտք է կանգ առնել լիառատ ջուր բերելու իրանց արդիւնաւէտ հողերը ոռոգելու համար։

Բօրչալույում այժմ գործում են չորս բամբակի գործարան—Յակոբեանի, եղբ. Բաղդասարեանների, Մանթաշեանի և Արամեանի։ Հետզհետէ Բօրչալուի գործերը բարդանում են, նամանաւանդ որ Աշաղա-Սարալ կայարանը վերածվել է ապրանքատար կայարանի։ Արամ Դալլաքեանց

Շուլաւէր

ՏՆԱՏԷՐԵՐԸ ԵՒ ՎԱՐՁԱԿԱԼՆԵՐԸ

Վարձակալներ ասելով ի հարկէ պէտք է ի նկատի ունենալ նրանց, որոնք քրեհով ապրում են ուրիշի տներում և ախորժանքով կուլ տալիս ու մարսում այդ տնատէրերի սանձարձակ կապրիզները։ Իսկ քաղաքի բարեկարգիչները, կամայ թէ ակամայ, այդ չը գիտեմ, բայց ինչ էլ որ անում են, դուրս է գալիս յօգուտ տնատէրերի և ի վնաս վարձակալների։

Վերցնենք թէկուզ հէնց քաղաքային վարչութեան արած ամենավերջին կարգադրութիւնը, որ վերաբերում է գեղեցիկ փասադով կառուցված տներին։ Այդ տեսակ տների տէրերը քաղաքից, որպէս պրէմիա, ստանում են առանձին վարձատրութիւն, եթէ նրանց կառուցած տների դրսի պատերը սիրուն լինեն և գեղեցիկ կերպով շպարված... Իսկ թէ ներսում բնակիչները ինչ գնով կը լինեն ապրելիս կամ որպիսի օդ շնչելիս, այդ ի հարկէ հարցնող չը կայ։

Սակայն մի կողմ թողնենք, ոչինչ չասենք այդ բնակարանների հազարաւոր խեղդիչ պակասութիւնների և նրանց միանգամայն անտէրութեան մատնված լինելու մասին ու վերցնենք բնակիչների կեանքի այնպիսի անհրաժեշտ պիտոյքներից մէկը, որպիսին է ջուրը։

Որպէս օրինակ վերցնենք մի այնպիսի մեծ և, թէկուզ հէնց պրէմիայի արժանացած գեղեցիկ փասադաւոր տուն, որի [illegible] մէջ վարձով ապրում են բազմաթիւ ընտանիքներ։ Բնակարանները տրված են «ջրով» և, որպէս այդպիսին, ի հարկէ նաև թանգ գնով։ Ինչպէս էք կարծում, ինչ է անում քաղաքային վարչութիւնը, եթէ այդ տան տէրը ժամանակին քաղաքին չէ վճարում իրան հասանելիք ջրափողը։

Քաղաքը, որքան մեզ յայտնի է, առանց այլևայլութեան փակում է ջրանցքը և այդ տան բոլոր բնակիչներին էլ թողնում առանց ջրի։

Ինչո՞ւ, «ջրով» և այդ «ջրի» պատճառով թանգ գնով բնակարան վարձող և «քրեհն էլ էս գլխից տուող» բնակիչները ինչո՞վ են ծարաւ մնալու պատժին արժանանում, և ինչո՞վ են մեղաւոր, եթէ տանտէրը չէ բարեհաճում իր «էս գլխից ստացած քրեհներից» քաղաքին իր պարտքը վճարել...

Կամ հաւատա՞նք միթէ, որ քաղաքը, բացի կենողներին ծարաւ թողնելուց, ուրիշ հնար և միջոց չունի տնատէր-խաղէյններից իր պարտքը ստանալու...

Ահա այս հանգամանքի վրա է, որ ուզում եմ հրաւիրել եթէ ոչ քաղ. վարչութեան, գոնէ դումայի ձայնաւորների ուշադրութիւնը և հարցնել։ Յայտնի է արդեօք նրանց, որ բնակիչները, մինչև խաղէյնից պարտքի ստացվելը, մնում են իրանց «ջրով» վարձած բնակարաններում անջուր և ծարաւ...

Եւ եթէ այո, արդեօք արդարացի են գտնում նրանք այդ՝ աւելի քան տարօրինակ որոշումը... Բ. Մկրտումեան

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Կիրակի, դեկտեմբերի 22-ին, Հայոց Բարեգ. Ընկ. տանը տեղի ունեցաւ Նիկ. Սարգսեանի դասախօսութիւնը, որ կազմակերպել էր Թիֆլիսի ժողովրդական համալս. ընկ. հայկական սեկցիան։

Դասախօսութեան նիւթն էր «Գոյութեան կռիւը օրգանական աշխարհում», որի հետաքրքրական լինելը գրաւել էր լսողների բազմութիւն և որի մեծ մասը սակայն կազմում էր աշակերտութիւնը։ Որքան ուրախալի է այն հանգամանքը, որ մեր դպրոցական մատաղ սերունդը հետաքրքրվում է հրապարակային նման դասախօսութիւններով, նոյնքան էլ ցաւալի է, երբ բանւոր և աշխատաւոր դասակարգը աչքի է ընկնում իր բացակայութեամբ այդօրինակ դասախօսութիւնների ժամանակ։ Ջէ՞ որ հայկական սեկցիան այդ դասախօսութիւնները կազմակերպում է յատկապէս բանւորութեան համար և կազմակերպում է ամենայն բարեխղճութեամբ, կանոնաւոր զով ամեն կիրակի տալով մի-մի ախօսութիւն։ Բանւոր-աշխատաւոր դակարգը պէտք է իր ներկայութեամբ ախուսէ սեկցիայի եռանդը և բարոյա վարձատրէ նրան։

ուցէ տրվող նիւթերը հետաքրքրակա՞ն։ Այդ դէպքում ևս բացակայութիւնը չէ, օգնելու է գործին. պէտք է ներկայ լի լսել և ապա ստացած տպաւորութեան կ սեկցիային յայտնել աւելի հետաքրքրող ցանկալի համարված նիւթերի մասին։ կամ կարելի է միթէ ասել, որ «Գոյուան կռիւը օրգանական աշխարհում» նիւ մասին կարդացվող դասախօսութեան լ աշխատաւոր և բանւոր դասակարգի մար հետաքրքրական ոչինչ չը կայ։ Չը տք է մոռանալ նաև այն, որ այդ դասասութիւններից ստացվող 5 և 10 կոպէկից գոյացող համեստ գումարով պէտք հոգացվեն այն երեկոյեան դասընթացքրի ծախքերը, որտեղ անգրագէտ մնացող նւորութիւնը սովորում է կարդալ ու ել...

Մ.

ՕՏԻԿԱՅ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՇՈՒՇՈՒՄ

Շուշու քաղաքային ինքնավարութեան բողջ կազմի առաջիկայ ընտրութիւնների իթով մենք կը կամենայինք մի քանի ոք ասել այն հազարաւոր ընտրողներին, ոնք հրաւիրվում են իրանց քաղաքացիան խոշոր պարտաւորութիւններից մէկը տարելու՝ ընտրելու ազգաբնակութեան րկայացուցիչներ, ձայնաւորներ քաղային ինքնավարութեան համար։

Քիչ ժամանակ չէ, որ Շուշին ստացել է ղաքային ինքնավարութիւն։

Քաղաքային ինքնավարութեան հաստաւթեամբ մեր քաղաքի գործերի համար րծունէութեան նոր և ընդարձակ ասպաէզ բացվեց, բայց միևնոյն ժամանակ ասպրէզ բացվեց այն մարդկանց համար, ոնց ձգտումս ու արհեստն է հասարակուեան բարիքը շահագործել իրանց անուան, առասիրութեան և այլն։ Այս կարգի մարիկ գոյութիւն ունեն ամեն տեղ, ամեն ասարակութեան մէջ։ Միայն դրանք աւելի տանգաւոր են այնտեղ, ուր հասարակուիւնը գիտակցութեան չէ հասել, ուր հաարակական կարծիքը չէ կազմակերպվել, ր իր բարձրութեան վրա կանգնած՝ չափի մենքին սկզբունքները և հասարակական ահերը տեսակէտից։

Հասարակական գործերի մէջ կարող են պէտք է լինեն զանազան կարծիքներ, հայացքներ, տեսակէտներ, բայց պէտք է, հրաժեշտ է, որ դիտաւորութիւնը, նպաակը մէկ լինի՝ հասարակական շահը։ Կարիքների ու հայեացքների ամբողջ բազմանութիւնը պէտք է այդ կէտի շուրջը տուի, դէպի այդ կէտն ուղղվի։

Սակայն մեզանում բոլորովին հակառակն է։ Տարբեր և բազմազան կարծիքներն ու յեացքներն հասարակական շահի գիտակութիւնից չեն բղխում, այլ անհատների նձնական հակումներից ու հաշիւներից։

Եւ ահա լսվում են տրտունջներ, որոնց ութիւնն այն է, որ համայնքը գիտակցութեամբ չէ գործում, վերին աստիճանի անարբեր է գտնվում, ուստի նրա ընտրած րաւասուների մեծամասնութիւնը կազմում ն այնպիսի մարդիկ, որոնք քաղաքային րծերի և ինքնավարութեան մասին ոչինչ սկացողութիւն չունեն...

«Ինքնավարութիւն» խօսքն ինքն ըստ նքեան անհատական իրաւունքի արտայայւիչ է։ Ինքնավարութիւնը գործունէութեան, մտածելու է հրաւիրում ամեն մի աղաքացու, տալով նրան վարչական իրաունքներ և միջոց՝ գործ դնել իր բոլոր նդունակութիւնները իր ծննդավայրի բաօրութեան համար։ Ինքնավարութիւն վաելող քաղաքացին պէտք է դադարի մեքեայ լինելուց։ Եւ ինչպէս այսօր անտարերութիւնից յետոյ իրաւունք չունենք տըրնջալու, այնպէս էլ վաղը, երբ քաղաքային ահերը աւելի և աւելի ոտի տակ տրվեն՝ րաւունք չը պիտի ունենանք բողոքելու։ Բոոքեցէք ձեր անտարբերութեան դէմ, արատախիլ արէք այն, և այն ժամանակ կացի արտասուքներ թափելու առիթ չէք ւնենայ։

Ասված է, որ գործի լաւ սկզբնաւորուիւնը նրա աջողութեան կէսն է. և շատ ւմարիտ է այդ ասացուածը, որովհետև մեն մի տուն միայն և հաստատ կարող լինել, երբ դրված է հաստատ հիմքերի րա։ Համայնքը իր գործերը վարելու հաար իրաւասուներ, ձայնաւորներ է ընտում և նրանց է տալիս իր իրաւունքը, իր աղաքի բաղդը։ Նա պէտք է այդ ընտրութեան մասնակցի աչալրջութեամբ, իր պարտի և իրաւունքի խորին գիտակցութեամբ։ ռաջ քաշեցէք այնպիսի մարդիկ, որոնք անօթ լինեն քաղաքային ինքնավարութեան արական սկզբունքներին, որոնք ընդուակ լինեն ընդհանուր շահերն ըմբռնել և րանց նուիրվել։ Քաղաքի գործերը լացով ւ տրտունջով չեն առաջ գնում, քաղաքաին ինքնավարութեան բարիքները վայնաուններով չեն մարմնանում, այլ գիտակցաան, արթուն գործունէութեամբ։

Շուշի — Պօղ. Զաքարեան

ՂԱՐԱԲԱՂԻ ԼՐԱԲԵՐ

Խանքենդ, 10 դեկտ.

Ահա երկրորդ ամիսն է, ինչ սիստեմատիքաբար Ղարաբաղի գիւղօրայքում գողութիւններ են կատարվում։

Այսպէս՝ Դահրազ գիւղից տասը եզն են գողացել, որից եօթը՝ քիւրդ Փչաննուսար գիւղից են յետ դարձրել՝ հետք տանող եզնատէրերը, իսկ մնացած երեքը չէ գտնվել. Նրանից յետոյ՝ Ղուշչուլար գիւղից մի ձի են գողացել, որի գտնելու առիթով ձեռք առնված միջոցները ապարդիւն են անցել. Նոյնպէս գողացել են ռուս Սունժինսկի գիւղից երկու եզն, Զամիլլու գիւղից մի խեղճ գաղթական հարարցու ձին։ Շատ վարպետօրէն գողացել են Ղայեալի գիւղի ծխատէր Վրթանէս քահանայի ձին. ապահով կերպով մտել են գոմը, փալանը դրել ձիու վրա, մի նոր գործած ջուալ էլ դրել վրան՝ և այդպէս անհետացել։

Գիւղացիների պատմածից երևում է, որ կատարվող գողութիւնների մէջ «անեցի մարդու մասը խառն է». «Ինչքան էլ համարձակ գող լինի, առանց տնեցի ծանօթ մարդու առաջնորդութեան չէ կարող գողութիւն անել»—ասում են նրանք։

Եւ մենք հաւատացած ենք դրանում։ Գողութիւնները կատարվում են գիւղի տականք կոչված տարրի միջոցով։ Ուրեմն գողութիւնների դէմ մաքառելու միջոցը այդ տականք, մութ տարրերի երևան հանելը և արդարադատութեան ձեռքը յանձնելն է,

Ուրիշ ոչ մի միջոց չի օգնի։

Սակայն ահա թէ ինչպէս են տրամաբանում այդ միակ և արմատական միջոցը առաջարկելիս. «Եթէ այդ մարդկանց արարմունքը յայտնագործենք, մեզ աւելի վնասներ կը հասնէ»։ Ի՞նչ կանեն,—հարցնում ես. «Կը գնան խոտի դէզ կրակ տան, մարագ կայրեն»։

Տեսնում ես, որ մարդիկ ընտրել են երկու չարեաց փոքրագոյնը, այն է լռել, որ աւելի վնասներ չը ստանան։

Թէ դա մինչև ե՞րբ է շարունակվելու, այդ յայտնի չէ։

Բայց նշանակալից երևոյթ է մութ տարրերի զօրեղանալը։ Նշանակալից երևոյթ է, որ մարդկանց տնտեսութիւնը, որ գոյացել է կաթիլ-կաթիլ արեան քրտինքով, խորտակվում է, ձեռներից ընկնում՝ իրանց վախկոտութեան և երկչոտութեան շնորհիւ։

Սակայն կառավարութիւնը, որի վրա է ծանրանում ժողովրդի անտեսութիւնը պահել-պահպանելու գործը, յուսով ենք, որ իր ձեռք առած իրական միջոցներով վերջ կը դնէ Ղարաբաղում վերսկսված գողութիւններին։ Մասնաւորապէս գիւղական տանուտէրերի ուշադրութիւնն ենք հրաւիրում՝ գողութիւնների մէջ գլխաւոր դեր խաղացող «տնեցի» մութ տարրերն յայտնագործելու և կառավարութեան ձեռքը յանձնելու գործը։ Դժբաղդաբար մեր տանուտէրերը իրանց «փէշատ փուլու»-ի ետևից են ընկած։

Ս. Ասլանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասի փոխարքայ, կոմս Ի. Ի. Վօրոնցով-Դաշկովը կիրակի ցերեկով կառքով զբօսանք կատարեց քաղաքի մէջ։

◆ Վերադարձաւ անդրկովկասեան երկաթուղիների կառավարիչ գեներալ բարօն ֆօն-դէր-Լօօպը։

◆ Կիրակի, դեկտ. 22-ին, Արտիստական Ընկ. դահլիճներում տեղի ունեցաւ Կովկ. Հայուհեաց Բարեգ. Ընկ. օգտին կազմակերպված «Կապոյտ դոմինօ» երեկոյթը։ Դերասան Վ. Փափազեան արտասանեց հայերէն և ֆրանսերէն երկու ոտանաւոր, երգչուհի Կոլօսօվան երգեց մի երգ, դերասանուհի Սիրանոյշ արտասանեց ոտանաւոր և երգիչ Տ. Նալբանդեան երգեց երկու ռոմանս։ Վերջինս հասարակութեան խնդրանօք ճաշակով երգեց հայերէն «Կռունկը»։ Ապա կայացան եւրօպական պարեր։ Երեկոյթը իր ներկայութեամբ պատւեց կոմսուհի Ելիզավէտա Անդրէևնա Վօրոնցօվա-Դաշկովան։ Նիւթական տեսակէտից երեկոյթը աջող պէտք էր ընդունել։

◆ Պոլիտեխնիկումի գլխաւոր կոմիտէտի տեխնիքական մասնաժողովը Լ. Ղուլեանի նախագահութեամբ իր վերջին նիստում որոշել է հրաւիրել Տօմսկից ինժեներ Բ. Րօգույսկիին Թիֆլիսի պօլիտեխնիկումի կառուցման համար։ Յիշեալ ինժեները կառուցել է Վարշավայի պօլիտեխնիկումի շէնութիւնը։

◆ Մեզ հաղորդում են, որ հինգշաբթի, ամսիս 26-ին, ցեր. ժամը 12-ին, կայանալու է Հայ Գիւղատնտ. և Տնայնագործ. Ընկ. ընդհանուր ժողովը։

◆ Թիֆլիսի նահանգապետը շնորհակալութիւն է յայտնել խուզարկու ոստիկանութեան պետ Գավլէվին և սրա օգնական Եարօսինսկիին եռանդուն ու աջողակ գործունէութեան համար խուզարկութեան և յանցաւորներին բռնելու գործում։

◆ Կիրակի, դեկտ. 22-ին հանգուցեալ յուշարար Ց. Սարգսեանի մարմինը բնակարանից բերվեց եկեղեցի հայ դերասանների, Հայ Դրամ. Ընկ. վարչութեան անդամների և մեծ բազմութեան ներկայութեամբ։ Թաղումից առաջ դամբանականներ արտասանեցին դերասաններ Վրոյր և Ցարութիւնեան և հանգուցեալի ընկերներից։ Հանգուցեալի դագաղի վրա դրված էին թարմ ծաղիկներից մի քանի պսակ։

◆ Մի յատուկ մասնաժողով է ընտրված բժ. Ստեփանեանի նախագահութեամբ քաղ. սպանդանոցի կանոնադրութեան և ծառաների կազմ նշանակելու համար։

◆ Քաղաքային ծննդաբերական ապաստարանի նորակառոյց շինութեան բացումը մարտի 1-ից շուտ չէ լինելու։

◆ Ալէքսանդրեան այգում, Կովկ. Կայս. Գիւղատնտ. Ընկ. շինութեան մէջ արդէն բացվել է մեղրավաճառանոց, որտեղից կարելի է ձեռք բերել համեմատաբար անարատ մեղր։

◆ Շաբաթ, դեկտ. 28-ին, տեղի կունենայ Հասարակական ակումբում օպերային ներկայացում Սօլովիևայի ղեկավարութեամբ։ Յունվարի 1-ին Մոսկվայի համալսարանի պրիվատ-դօցենտ Վ. Տօտօմեան կը կարդայ ռեֆերատ ժամանակակից կօօպերատիվ շարժման և Մոսկվայի ժողովրդական բանկի մասին, որից յետոյ կը լինի զրոյց և երաժշտական բաժին։

◆ Թիֆլիսում լոյս է տեսել Վ. Վարդանեանի խմբագրութեամբ և հրատարակութեամբ երգիծաբանական նոր «Սատիրիկօն», ռուսերէն, պատկերազարդ։

ԷՋՄԻԱԾՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Քաղուածք «Արարատից»)

◆ Դիւանի գրութեամբ յանձնարարվեց Տարօնի հայոց առաջնորդ Ներսէս եպիսկոպոսին յայտնել Նորին Վեհափառութեան իր վերջին հիմնաւոր կարծիքը՝ արդեօք Մարգար Պօպօվեանի ծախքով կառուցվելիք վարժարանը որտե՞ղ է յարմար շինել—Մուշի ս. Կարապետ վանքի բակո՞ւմ թէ մի այլ յարմար տեղ։

◆ Սինօդը՝ քննութեան առնելով Թիֆլիսեցի Կ. Վարդանեանի կտակի վերաբերեալ գործը և ի նկատի ունենալով որ Վարդանեանի կտակած 20,000 ր. գումարի տոկոսներով ըստ կտակարարի ցանկութեան պէտք է օգտվի Թիւրքիայի ս. Կարապետ վանքը, որոշեց ըստ բարեհաճութեան Վեհափառ Հայրապետի ուղարկել կտակած գումարը Կ. Պօլսի պատրիարքին՝ վարվելու ըստ կտակի տրամադրութեան։

◆ Սինօդը, ստանալով Գանձակում բնակվող երդուեալ հաւատարմատար պ. Նիկողայոս Բաբաքեխեանի համաձայնութիւնը, որոշեց. վարձել երդ. հաւատ. Ն. Բաբաքեխեանին փաստաբան Ղարաբաղի թեմի և թեմում գտնվող վանքերի կալուածական գործերը դատաստանական ու վարչական բոլոր հիմնարկութիւններում պաշտպանելու և վարելու համար՝ տարեկան 1200 ր. վարձով։

◆ Սինօդը՝ քննութեան առնելով Ժամհարեան եղբ. դրամական նուէրի վերաբերեալ գործը՝ որոշեց. Ժամհարեան եղբայրները հանգուցեալ Մկրտիչ Ա. կաթողիկոսին ուղարկած գումարից սինօդին հասած մօտաւորապէս 10,000 ր. գումարը տոկոսներով Մայր Աթոռի ճեմարանում պահել սանը կտակարարների անունով։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Մօտ օրերս Կախէթ կը մեկնեն Վրաց Գիւղատնտեսական Ընկերութեան տեխնիկական սեկցիայի անդամները, կախեթեցիների խնդրանօք տեղն ու տեղը ուսումնասիրելու խաղողի և ոռոգելու ջրի հարցի կանոնաւորման համար։

◆ Վրաց մէջ Գրագիտ. Տարածող Ընկ. վարչութեան գործավար Գ. Բուրճուլաձէն նշանակվել է նոյն ընկերութեան միջոցներով պահվող դպրոցների և գրադարան-ընթերցարանների շրջիկ տեսուչ-հրահանգիչի պաշտօնում։ Բուրճուլաձէի փոխարէն գործավար է նշանակված Վ. Բուրջանաձէն։

◆ Վրաց մէջ Գրագիտ. Տարածող Ընկերութեան կից գործող վրաց մուզէումի յանձնախումբը իր վերջին նիստում որոշել է՝ 1) Զատել մուզէումը գրադարանից և այն զետեղել այլ դահլիճում, 2) գրադարանը ենթարկել 4 ստորաբաժանումների, այս է՝ ձեռագրերի, տպագրված վրացերէն գրքերի, օտար լեզուներով եղած գրքերի Վրաստանին վերաբերեալ, և օտար գրքերի՝ այլևայլ բովանդակութեան, 3) կազմել տպագրված գրքերի ցուցակը, 4) ցուցակի մէջ մուծել նոր ստացված պատմական նշանակութիւն ունեցող գրութիւնները, 5) գնել նկարիչ Թօփձէից ազգագրական նշանակութիւն ունեցող նկարները, 200 ր. գումարի, մուզէումի համար և այլն և այլն։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԼԷԲԼԷԲԻՋԻՆ ՌՈՒՍԱՑ ԲԵՄԻ ՎՐԱ

Բագու, 15 դեկտեմբերի

Բագուի Հ. Կ. Միութիւնն անցեալներում այդ օպերէտը մի քանի անգամ բեմ հանեց, և հայ հասարակութիւնը բաւական ուրախութեամբ լցրեց թատրոնը։ Իսկ այս անգամ բեմ հանվեց, ամսիս 14-ին, ռուսերէն լեզուով, որը խաղաց Պ. Ի. Ամիրագօյի խումբը։

Լէբլէբիջիի բովանդակութիւնը մօտաւորապէս հետևեալն է։ Թիւրքիայի մի անկիւնում հարուստ կալուածատէր Խուրշուդ բէյը սիրահարված է լինում հասարակ լէբլէբիջիի աղջիկ Ֆաթիմէի վրա, որին փախցնում ու բերում են բէյի ապարանքը։ Աղջկայ հայրը՝ Հօռ-հօռը՝ սար ու ձոր ընկած փնտռում է աղջկան և ընկնում է ենիչերիների ձեռքը, որոնք շրջապատած նրան՝ բերում են բէյի ապարանքը։ Հայրը չիմանալով, որ իր աղջիկը ապարանքումն է գտնըվում, խելացնոր կերպով օգնութիւն է խնդրում իրան շրջապատողներից և բացատրում է ճանապարհորդելու նպատակը։ Վերջապէս Հօռ-Հօռը իմանում է, որ իր աղջիկը բէյի մօտն է, և պահանջում է յանձնել նրան. սակայն բէյի գայեակը և շըրջապատողները աշխատում են համոզել, որ աղջիկը բէյի հետ սիրահարված է ու պիտի ամուսնանան։ Հայրը նախ ընդդիմանում է. աղջկան թևից բռնած քաշում, տանել է ուզում, բայց վերջը համոզվում է աղջկայ կեանքը կապել բէյի հետ։

Բովանդակութիւնը ճիշդ այն է, ինչ «Ասլի և Քեարամ» պիէսինն է, միայն այն տարբերութեամբ, որ «Լէբլէբիջին» կոմիկական է, միւսը՝ դրամա։ Եւ որ Ասլին հայ քահանայի աղջիկ է, իսկ Ֆաթիմէն մահմեդական։

Ամբողջ պիէսը ունի երեք գործողութիւն, որոնցից առաջինն ունի 13, երկրորդը 9-ը, երրորդը նոյնպէս 9-ը տեսիլներ։

Բէյի դերը կատարում էր Ամիրագօն ինքը, Ֆաթիմէի դերը Եանկօվսկայա. որքան առաջինը թոյլ էր, նոյնչափ էլ երկրորդը հետաքրքրական՝ իր սիրային շարժումներով։ Իսկ խաղը ընդհանուր առմամբ բաւական հետաքրքրական էր, որը արժանացաւ երկար ու յաճախակի ծափահարութեան։

Հայկական ոչինչ չը կայ խաղի ու երաժշտութեան մէջ, հետևաբար ինչպէս օտարներին պիտի հետաքրքրէ, նոյնպէս և հայերին, չը նայելով որ ներկայ գտնվողների 95%-ը հայեր էին։ Այդ բացատրվում է նրանով, որ այդ խաղի համար ռուսերէն րեցենզիաներ դեռ չեն եղել տեղիս թերթերում, իսկ օտարները կարծում են, որ խաղը վերցված է հայկական կեանքից, մանաւանդ որ թէ հայերէնը և թէ այս ռուսերէնը կազմակերպել է Կուլ. Միութիւնը։

Մուզիկան աւելի իտալական էր, քան ասիական։

Թատրոնը, ուր տեղի ունեցաւ ներկայացումը, Մայիլեաններինն էր և համարեա հասարակութեամբ լիքը։

Ս. Գարագաշ

ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ՏՈՒՐՆԷ

Մեզ խնդրում են հաղորդել, որ դերասան Ոսկանեանը ազատ դերասան-դերասանուհիներից կազմել է մի խումբ՝ գաւառների և Ատրպատականի համար։

Խմբի մէջ հրաւիրված են հետևեալ անձինք. տիկ. տիկ. Մայսուրեան, Արուս, Անահիտ, Փառանձեմ, Սօֆի-Վ. և Սիր. Ղազարեան և պ. պ. Ալիխանեան, Ստեփանեան, Ոսկանեան, Ղազարեան, Թորոսեան, Խաժակ, Մուսեան, Տալեան և ուրիշները։

Ռեպերտուարը բաղկացած է հետևեալ պիէսներից։ Ինքնուրոյն. «Նամուս», «Չար Ոգին», «Արմենուհի» և «Աւերակների վրա» Շիրվանզադէի, «Սև Թուչըն» Ահարոնեանի, «Խենթը» փոխադր. Րաֆֆիի վէպից, «Ազրայիլ» և «Քրիստոսի փոխանորդը» Ս. Թառայեանի։ Թարգմանական. «Դիմակահանդէս» Լերմոնտովի, «Կարմիր բժիշկ» Միլլապիի, «Տանդ» Ասցերաշևի, «Բալուզինի ամուսնութիւնը» Օստրօվսկիի, «Բրանդ» Իբսէնի, «Կենդանի ապրանք» Օստրօժսկիի, «Ապուշ» Դոստոեվսկիի, «Ուրուականներ» Իբսէնի, «Միրրա Էֆրօս» Գորդինի, «Անյայտ կին» Բիսսոնի և այլն։

Խումբը կայցելէ Կարս, Երևան, Հին-Նախիջևան, այնուհետև Պարսկաստան։

Խումբը Թիֆլիսից մեկնեց երէկ, երկուշաբթի, դեկտեմբերի 23-ին։

ՄԱՄՈՒԼ

Իբրև մի նոր ապացոյց, թէ Դաշնակցութեան օրգան թերթերը որքան մեղանչում են ճշմարտութեան դէմ ամեն անգամ, երբ խնդիրը վերաբերում է «Մշակին» և նրա ղեկավարներին, և ինչպէս են յեղաշրջում փաստերը, առաջ կը բերենք, ի միջի հարիւրաւոր օրինակների, երկուսը, որոնք ծիծաղ միայն կարող են յարուցանել։

Վանի «Աշխատանք» դաշնակցական թերթը Ալ. Քալանթարի մահը յայտնել է իր ընթերցողներին այսպէս. «Նա ռուսաց կառավարութեան պաշտօնեայ (չինօվնիկ) էր»։ Սրանով է կամեցել բնորոշել Քալանթարի գործունէութիւնը։ Որովհետև թերթը դիտմամբ մոռացել է, որ նոյնպիսի չինօվնիկ էր Քալանթարի հետ միաժամանակ և Ս. Զաւարեանը։ Ուրեմն, եթէ չինօվնիկութիւնը ապացոյց է, որ մարդ չէ կարող իդէալիստ լինել և օգտակար գործող, այդ դէպքում Ս. Զաւարեանն էլ ոչ իդէալիստ էր և ոչ օգտակար գործող, ըստ «Աշխատանքի»։

Մի այլ դաշնակցական թերթ, «Ասպարէզ» անունով, որ նկատված է իբրև դեղին մամուլի օրգան, կամենալով ցոյց տալ, որ Գ. Արծրունու օրով «Մշակի» մէջ գործողները, զզվելով Քալանթարից հեռացան, գըրում է հետևեալը. «Հետզհետէ ձգեցին «Մշակը» և հեռացան Գրիգոր Արծրունիի երդւ.-հաւատարմատար աշակերտ - ընկերները—Լէօ, Ս. Մալումեան, Խաժակ, Վըրձին, Ego և այն բազմաթիւ մաքի մշակներ, որոնք Գրիգոր Արծրունիի «Մշակին» արժանաւոր սիւները կը կազմէին»։

Դուրս է գալիս, որ Գրիգոր Արծրունու հաւատարիմ ընկեր «Վրձինը» (ինչպէս յայտնի է, «Վրձինը» Ալ. Քալանթարի գրական անունն է) զզվել է Քալանթարից և հեռացել «Մշակից»։ Չենք խօսում այն ստութեան մասին, որ Գ. Արծրունու օրով ոչ Լէօ, ոչ Խաժակ, ոչ Ego «Մշակի» խմբագրութեան անդամներ չէին բնաւ, որ Լէօ, Մալումեան, Խաժակ, Ego երկար տարիներ գործել են Քալանթարի հետ միասին նրա խմբագրութեան ներքոյ։

*

Պարիզում հրատարակվող «Mècheroutiette» հանդէսը, որի ղեկավարն է Թիւրք զօրապետ Շէրիֆ-փաշան և որ «Ազատամտական Համաձայնութիւն» կուսակցութեան օրգանն է, խօսելով օսմանեան պարլամենտի ընտրութիւնների մասին, առաջ է բերում այն որոշումը, որ կայացրել է հայ Դաշնակցութիւն կուսակցութիւնը այդ առիթով իր տարեկան համագումարի մէջ։

Նկատելով որ պարլամենտը միակ հաստատութիւնն է, ուր հնարաւոր է հետամուտ լինել օրինաւորապէս և սիստեմատիքաբար մեր պահանջների իրագործման՝ Հայաստանում մտցվելիք ռէֆորմների վերաբերմամբ.

Նկատելով որ համեմատական ներկայացուցչութեան սկզբունքը օրակարգի ամենահրատապ հարցն է.

Դաշնակցութիւն կուսակցութեան համագումարը որոշում է.

1° Պահանջել բոլոր քաղաքական կուսակցութիւնների և հայոց պատրիարքարանի հետ համերաշխաբար, Թիւրքաց կառավարութիւնից, ընտրողական օրէնքի բարեփոխութիւնը, ապահովելու համար հայկական տարրի ներկայացուցչութիւնը պարլամենտում, իր թուի համաձայն.

2° Մերժման դէպքում, նա որոշում է ընտրութիւնների դէմ ազգային բոյկօտաժ հրատարակել.

3° Այն դէպքում, երբ կառավարութիւնը հրաւիրելու լինի նիստի 1912-ին լուծված պարլամենտը, մեր ընկեր պատգամաւորները պէտք է իրանց պատճառաբանեալ հրաժարականը տան։

Այս որոշումը երկու եզրակացութեան է բերում մեզ, այն է՝ 1) Դաշնակցութիւնը դեռ այնքան միամիտ է և զուրկ քաղաքական հասունութիւնից, որ կարծում է, թէ օսմանեան պարլամենտի միջոցով կարելի է իրագործել հայկական ռէֆորմները կամ բարւոքել Հայաստանի դրութիւնը 2) նա այլ ևս չէ նայում հայոց ազգային պատրիարքարանի վրա՝ իբրև մի մասնաւոր Կում-Կափուի պատրիարքարանի վրա, ինչպէս նայում էր 1908 թւից ի վեր, ի հաճոյս երիտասարդ Թիւրքերի՝ երբ կնքեց սրա հետ իր անբնական ամուսնութիւնը։

*

Նոյն ամսագիրը՝ խօսելով հայկական համազգային յօբելեանի մասին, ի միջի այլոց հետևեալն է ասում.

Հայկական գրերի գիւտը V դարից է սկիզբն առնում։ Երկու հայ հոգևորականներ էին, որոնք հայ ազգը չենթարկելու համար այնքան ազգերի վիճակին, որոնք, գրականութիւն չունենալով անհետացել են, յղացան միտք օժտել հայերին գրերով։ Մինչև V դարը հայերը գործ էին ածում յունական և ասորական գրեր։ Հայ գրերի գիւտը գրական մի վերածնութեան ազդանշանն եղաւ, որ արտադրեց հայկական գրականութեան ամենագեղեցիկ գործերը։ Աստուածաշնչի թարգմանութիւնը, որ մեծ գիտնական Բարթելէմի Սէն Հիլէրը կոչում էր թագուհի թարգմանութիւնների, այդ ժամանակի գործ է։ Ինչ վերաբերում է տպագրութեան, պէտք է յիշել, որ հայերը եղան արևելեան առաջին ազգը, որ որդեգրեց տպագրութիւնը։ Առաջին հայ գիրքը տպվել է 1513 թ. Վենետիկում։ Ռուսները հրատարակել են իրանց առաջին գիրքը միայն 50 տարի յետոյ, իսկ Թիւրքերը՝ միայն XVIII դարում։

Այդ առիթով պէտք է արձանագրել մի գեղեցիկ ժեստը մեր հայ հայրենակիցների, որոնք որոշել են, արժանաւորապէս փառաբանելու համար յիշատակը այն մեծ հայերի, որոնք օժտեցին նրանց մի անգին գոհարով, բանալ հանգանակութիւն յօգուտ հայ դպրոցների։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գորի, 10 դեկտեմբերի

Կարդացի «Մշակի» № 274-ում Գորու եկեղեցիների գործակալ Խուցեան քահանայի պատասխան-հերքումը, որին պատիւ ունեմ պատասխանել հետևեալը։

«Մշակի» № 262-ում Գորուց գրված ծխականների նամակը լիովին ճիշդ է. այն էլ ճիշդ է, որ նամակի տակը ես եմ ստորագրել, այլ ոչ թէ «մի մութ անձնաւորութիւն», ինչպէս գրում է հ. Խուցեանը։ Հ. Խուցեանը ի զուր է աշխատում արդարացնել իրան Գորու հայ հասարակութեան և ընթերցողների առաջ։ Այո, հ. Խուցեանն ինքն ինձ ասաց, թէ «առաջնորդը Քարաշէն եկեղեցու համար քահանայ է ուղարկել»։

Ահա չորս ամիս է, որ մեր գործակալը չէ նշանակում երկրորդ և վերջնական ծխ. ժողով՝ ընտրելու մի քահանայ կամ հաստատելու ժամանակաւոր ուղարկված քահանային ծխականների կողմից մշտական ծխատէր քահանայ Քարաշէն եկեղեցում։ Գործակալի այս վարմունքը ահագին տարաձայնութիւնների և խռովութիւնների պատճառ է դարձել։

Ցանկալի էր, որ հ. գործակալը սրանց պաշտպանէր ժողովրդի իրաւունքները օրէնքի ներած սահմաններում։ Այդ ասում եմ նրա համար, որ հ. գործակալը անցեալում, երբ մի անգամ երէցփոխի և հոգաբարձութեան ընտրութիւն էր նշանակված, ծխականները երեք անգամ միաձայն ընտրեցին մէկին, իսկ հ. գործակալը հաստատել չը տուեց ընտրեալին՝ զանազան նկատումներից դրդված։ Բացի դրանից, ահա երկու տարի է, ինչ բարձր հոգևոր իշխանութիւնը հրամայել է մեր հայ գործակալին երէցփոխի ընտրութիւն կայացնել ս. Ստեփանոս քարաշէն եկեղեցում, իսկ գործակալը չէ կատարում։

Իսկ ինչ վերաբերում է Սուլղեան քահանային, ես ինքս էլ եմ ասում, որ արժանաւոր քահանայ է և համախոսականը, որ ես կազմել եմ, ճիշդ է. ծխականներս շատ սպասեցինք և տեսանք, որ ոչինչ չէ դուրս գալիս, ուստի Քարաշէն եկեղեցու երեցփոխի խնդրանօք ես ինքս գրեցի համախոսական բարձր հոգևոր իշխանութեանը ուղղված, խնդրելով որ հաստատի Սուլղեան քահանային մշտական ծխատէր հովիւ Քարաշէն եկեղեցում։ Եւ այդ համախոսականն առաջինը ինքը երէցփոխը ստորագրեց և ապա ծխականներս։

Արմենակ Մարութեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԵՐԻՏԱՍԱՐԴ-ԹՈՒՐՔԵՐԻՆ

Երիտասարդ-թիւրքերը վիրաւորվում են —գոնէ այդպէս են իրանց ձևացնում— երբ Ռուսաստանը և միւս եւրոպական պետութիւնները Թիւրքահայաստանի մէջ ռէֆորմներ մտցնելու համար պայման են դնում՝ իրանց կոնտրոլը։ Վիրաւորվում են, որովհետև կարծում են, թէ վաղուց է, ինչ վերացված է սուլթան Աբդիւլ-Համիդի ռէժիմը, և վաղուց է, ինչ երկրի մէջ յայտարարվում են սահմանադրական կարգեր։

Սահմանադրութիւն և անվստահութիւն դէպի երկրի կառավարութիւնը. դա անհեթեթութիւն է...

Կան զանազան տեսակի մարդիկ։ Կան մարդիկ, որոնք երբէք չեն վիրաւորվում, երբ նրանց չեն հաւատում։ Բայց կան և ուրիշ հայեացքների տէր մարդիկ, որոնք խորը կերպով խոցոտված են զգում իրանց, երբ թերահաւատութեամբ են վերաբերվում նրանց խօսքին։ «Պարոն,—նկատում են նրանք,—ես ձեզ առիթ չեմ տուել կասկածելու իմ խօսքերի վերաբերմամբ. ինձ թւում է, թէ դուք շատ անփոյթ կերպով էք վերաբերվում դէպի ձեր սեփական խօսքը. այդպէս չէ կարելի. պէտք է հիմն ունենալ կասկածելու համար ուրիշի ասածների մասին»։

Ես չը գիտեմ, թէ ի՛նչ տեսակի մարդկանց թւին են վերագրում իրանց երիտասարդ-թիւրքերը։ Բայց ահա 5-րդ թէ 6-րդ տարին է, ինչ նրանք կառավարում են երկիրը, և այդքան ժամանակի ընթացքում ոչ մի առհաւատչեայ, ոչ մի ապացոյց չը ներկայացրին նրանք ոչ իրանց ժողովրդի և ոչ էլ եւրոպական հասարակական կարծիքի առաջ այն մասին, թէ, այո, նախկին գոյութիւն ունեցող կարգերը, սուլթան Աբդիւլ-Համիդի կարգերը, չքացել են և որ այժմս երկրի մէջ տիրում են ուրիշ սահմանադրական կարգեր։

Թողեցէք, պարոնայք երիտասարդ-թիւրքեր, հայերին և նրանց զբաղեցնող խնդիրները մի կողմ։ Ինչպիսի բարձր, լուսաւոր հայեացքներով էլ լինէք տարված, բայց մենք հասկանում ենք, որ հայերը եղել են և կը լինեն ձեզ համար օտար տարր երկրի մէջ։ Ահա 5-րդ թէ 6-րդ տարին է, ինչ ղեկավարում էք երկիրը։ Լաւը նա է, դուք պատմեցէք մեզ, թէ ինչ բան արիք դուք ձեր տիրապետութեան ժամանակ մուսուլման ազգերի համար, որպէսզի շարժած լինէք նրանց այն բութ, մեռած կէտից, որի վրա կանգնած են նրանք դարեր շարունակ։ Ի՞նչ մեծութիւն է ներկայացնում այն դպրոցների թիւը, որ դուք բացէք նրանց համար, շատ թէ քիչ աշխարհական ուղղութեամբ, որպէսզի, գիտէք, հնարաւոր լինի նրանց հաղորդակից անելու եւրոպական կուլտուրային։

Ահա 5-րդ թէ 6-րդ տարին է, ինչ կառավարում էք երկիրը։ Ի՞նչքան ճանապարհներ տուիք դուք երկրին՝ հեշտացնելու համար նրա հաղորդակցութիւնը կամ տրանզիտը։ Ձեր ժողովուրդը համարեա թէ հողագործ ժողովուրդ է։ Ի՞նչ մեծութիւն են ներկայացնում ձեր ագրոնոմների և ուրիշ գիւղատնտեսների շարքերը, որոնց դուք ուղարկեցիք երկրի խորշերը՝ նրա նահապետական տեխնիկան շատ թէ քիչ հողմնահարելու համար։ Ո՞րտեղ են գործում ձեր ինժեներները՝ երկրի բնական հարստութիւնները շահագործելու և ժողովրդին ապրուստի միջոց հայթայթելու համար։ Ո՞րտեղ են գտնվում ձեր բժիշկները, ո՞րտեղ են բացված ձեր հիւանդանոցները։ Ո՞րտեղ էք ուսում տուել ձեր բէյերին, զանազան կայմակամներին, գաւառապետներին և այլն, որոնք փաստօրէն երկրի կառավարիչներն են։ Ի՞նչ մի նոր բան մտցրիք ժողովրդի կեանքի մէջ ձեր տիրապետութեան օրերում՝ տնտեսագիտական, կրթական, ընկերվարական, քաղաքացիական մտքով։ Ինչի՞ մէջ է կայանում ձեր «նոր» միսիան, որով դուք առանձնապէս հպարտանում էք։

Մեզ թւում է թէ այս և թէ այս տեսակի հարցերին դուք պատասխաններ չունէք։ Դուք պահպանում էք երկիրը նոյն մեռած կէտի վրա, ինչ մեռած կէտի վրա գտաք նրան, երբ խլեցիք իշխանութեան ղեկը Աբդիւլ-Համիդի ձեռքից։ Եւ դուք վիրաւորվում էք, երբ ձեզ չէ հաւատում ոչ երկրի ազգաբնութիւնը, ոչ էլ Եւրոպայի հասարակական կարծիքը։

Կրկնում եմ, Թողէք հայերին և նրանց զբաղեցնող խնդիրները մի կողմ. Նրանք ձեզ համար, ի հարկէ, օտար ժողովուրդ են։ Ցոյց տուէք ձեր գործերը՝ կատարած հէնց ձեր բուն մուսուլման ազգերի համար. թէ չէ՝ կարող է կասկած յայտնվել, որ դուք խլեցիք իշխանութիւնը բացառապէս ձեր հաճոյքի, ձեր անձնական բաղդաւորութեան համար։ Ապացուցէք, որ դուք աշխատանքի համար, մասսայական աշխատանքի համար, ընդունակ մարդիկ էք, որ ժողովրդի քաղաքականութեան խնդիրը ձեզ համար կենսական խնդիր է։

Իսկ մինչ այդ՝ մինչ այդ ապացոյցները՝ առիթ չը կայ վիրաւորվելու, երբ մեզանից իւրաքանչիւրը կը շարունակէ ունենալ իր «սեփական կարծիքը» ձեր գործունէութեան արժէքի մասին։

Ընթերցող

Մոսկվա

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 14 դեկտեմբերի

Դեկտեմբերի սկիզբներում տեղի ունեցած թեմական պատգամաւորական ժողովում օրակարգի խնդիր դարձաւ քաղաքիս երեք դպրոցների ունեցած դրամագլուխների այսուհետև անկորուստ պահպանելու կարևորագոյն հարցը՝ անցեալի դառն փորձից խրատված։

Երկար խորհրդակցութեան և վէճերի նիւթ անելուց յետոյ ժողովը միաձայնութեամբ վճռեց՝ Թաւրիզի թեմական և երկթաղի ծխական դպրոցների դրամագլուխները յատկացնել կամ արդիւնաւոր և վըստահելի կալուածների և կամ դրամները պահել անպայման բանկերում, առանց մասնաւոր անձանց կամ առևտրական ձեռքին յանձնելու։

Որպէսզի առհասարակ թէ կալուածական գործը և բանկայինը լաւ ուսումնասիրութեամբ գլուխ գայ, ժողովը ընտրեց փորձառու և հմուտ անձնաւորութիւններից մի յանձնախումբ, որը իր ուսումնասիրութիւններն ու առնելիքները պատրաստելուց յետոյ ներկայացնելու է պատգամաւորական ժողովի հայեցողութեանն ու վաւերացմանը։

Այս է, ահա միակ միջոցը ազգային հաստատութիւնների ունեցած դրամագլուխները անկորուստ պահպանելու։

Ատրպատականի հայոց թեմական դպրանոցի հոգաբարձութեան նախաձեռնութեամբ և յայտարարութեամբ ամսի 8-ին, Ղալայի ս. Աստուածածին եկեղեցում, մինչև այժմ նմանը չը տեսնված երկսեռ բազմութեան և աշակերտ-աշակերտուհիների ներկայութեամբ տեղի ունեցաւ հոգեհանգիստ դպրանոցի բարերար Եգոր Զոհրաբեանի յիշատակին։

Թեմակալ Ներսէս վարդ. Մելիք-Թանգեան հոգեհանգստեան արարողութիւնից յետոյ խօսեց սուրբ պատշաճի ազդու քարոզ և բացատրեց հասարակութեան ի նպաստ ապրելու և զոհաբերելու բարձր նշանակութիւնը։

Հայկազուն

ՄԻ ԱՊԱԳԱՅ ՎԱՐԺՈՒՀԻՆՈՑԻ ՖՈՆԴ

Զմիւռնիայում հրատարակվող «Դաշինք» թերթում կարդում ենք հետևեալը.

«Ինչպէս կը յիշուի, հանգուցեալ Թագւոր փաշա ասկէ տարիներ առաջ, իր մահուան առէն 5000 անգլ. ոսկի կտակած է, որպէսզի երբ այդ գումարը պէտք եղած քանակութեան հասնի, Իզմիրի մէջ իր վաղամեռիկ աղջկան՝ օր. Դարուհիի անուամբ Դարուհեան վարժուհինոց մը բացուի։

«Այժմ կը կարծուի, որ կտակեալ գումարը 10,000 ոսկի եղած ըլլայ։ Կտակի բնագիրը առաջնորդարանի մէջ չգտնուելուն և անոր մասին որոշ տեղեկութիւն մը կարենալ քաղելու համար, առաջնորդ ս. հայրը իր Պարիզ գտնուած միջոցին թէև փափագած է տիկին Թագւոր փաշայի հետ տեսակցիլ, բայց տիկնոջ բաւական մտահոգիչ հիւանդութեան պատճառաւ կարելի չէ եղած. առաջնորդ ս. հայրը այս մասին տեսակցած է վսեմ. Պօղոս փաշայի հետ, որ յայտնած է, թէ ինք կտակակատարներէն մին է, թէ կտակը կատարելապէս վաւերական է և դրամը կը գտնուի բանքան, որով այս մասին մտահոգութեան ոևէ պատճառ չկայ։ Պօղոս փաշա խոստացած է նաև Եգիպտոս վերադարձին կտակագրէն քաղելով Իզմիրի առաջնորդարանին հաղորդել հարկ եղած մանրամասնութիւնները։ Պօղոս փաշա յայտնած է նաև, թէ՝ մտադիր է ս. Ստեփանոս եկեղեցւոյ շրջափակին մէջ գտնուող՝ իր մեծ հօր և հօրեղբօր գերեզմանին վրայ գեղակերտ շիրիմ մը կանգնել»։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վիէննայում սպասվում է բուլղարական արքայ Ֆերդինանդը տօներից յետոյ։ Արքան տեսակցելու է Ֆրանց-Յովսէփ կայսրի և արտաքին գործերի մինիստր կոմս Բերխտոլդի հետ։

◆ Պարիզում ստացված տեղեկութիւնների համաձայն, Ռուսաստանի սեպարատ բանակցութիւնները Գերմանիայի հետ գերմանական գինւորական միսսիայի հարցի առիթով վերջացել են անհետևանք։

◆ «Н. В.»-ի Կ. Պօլսի թղթակիցը հեռագրում է, որ գեներալ Սանդերսը լինելու է առաջին զօրաբանակի իրական հրամանատարը, որովհետև այդ հարցը լուծված է սկզբունքով։

◆ Ֆրանսիայում ձիւնախառն կատաղի մրրիկը սոսկալի վնասներ հասցրեց։

◆ Պետերբուրգում թունաւորվեց բժիշկ Վայնշտէյնը չը կարողանալով տանել հանգուցեալ կնոջ կարօտը։

◆ Ռուսաստանի մի քանի նահանգներում, Եապոնիայի մի քանի տեղերում, ինչպէս և Կովկասի գաւառներից մի քանիսում սկսվում է սով։

◆ Հանդիպելով անաջողութեան Ռուսաստանում, մօնղոլական պատգամաւորութիւնը Մօնղոլիայում սկսել է հակառուսական ուժեղ ագիտացիա։ Քարոզվում է այն միտքը, թէ Մօնղոլիան միացվելու է Չինաստանին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾ.)

21 դեկտեմբերի

ՄԵՆՏՕՆԱ։ Ռօկբրիննա քարահանքում պայթումից շատ մարդիկ սպանվեցին և վիրաւորվեցին։

ԿԱՀԻՐԷ։ Բուլղարական կառավարութեան 2 պատգամաւոր բանակցութիւններ սկսեցին եգիպտական կառավարութեան հետ Եգիպտոսում գեներալ-հիւպատոսարան հաստատելու մասին։

Կազմվեց ռուսական ընկերութիւն, որի նպատակն է դիւրութիւն տալ Եգիպտոս և Պաղեստին դիմող ռուս ճանապարհորդներին։

ԼՕՆԴՕՆ։ Տիկին Դեվիսը օդագնաց Գեմէլի հետ, բարձրանալով բիպլանով, իջնելիս գլխիվայր իջաւ։ Սա առաջին կինն է, որ այդօրինակ արի թռիչք կատարեց։

ՄԷՑ։ Զինուորական գնացքը կայարանում ընդհարվեց մի ուրիշ գնացքի. 7 զինուոր սպանվեցին, 12 հոգի ծանր վիրաւորվեցին, մի քանիսը թեթև։

ՄԱԴՐԻԴ։ Ամբողջ երկրում ձիւնային մրրիկներ են։ Լեռնային գիւղերի բնակիչները կտրված են ձիւնի պատճառով։ Մադրիդում 12 աստիճան սառնամանիք է։

ՑԵՏԻՆԻԷ։ Թագուհի Միլենայի առողջական դրութիւնը լաւ է։

ՄՕՍԿՎԱ։ Վախճանվեց ֆրանսիացի դաշնակահար Րաուլ Պուինիօն, որ եկել էր մի քանի համերգ տալու նպատակով։

ԲԱԹՈՒՄ։ Առատ ձիւնի պատճառով Վերին Աջարիան կտրված է Բաթումից։

22 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Վաղը բացվող ժողովրդական կրթութեան առաջին համառուսական համագումարին մասնակցելու համար եկել են աւելի քան 3000 մարդ։ Ժողովրդական տանը համագումարի անդամները ծանօթացան միմեանց հետ։ Ժողովրդական տան մեծ թատրօնում ներկայացվեց «Դէմօն» օպէրան։

Փակվեց Թօքախտի դէմ մաքառող համառուսական լիգայի խորհրդի չորրորդ խորհրդակցութիւնը։ Արձանագրվեց Լիգայի ֆինանսական ողբալի վիճակը և որոշվեց միջնորդել կառավարութեան առաջ, որպէսզի տրվող նպաստը 25,000-ից դարձնվի 100,000 րուբլի։

ՄՕՍԿՎԱ։ Ձիարշաւներին 5000 ր. մրցանակը շահեց կոմս Վորոնցով-Դաշկովի «Օբնովա» նժոյգը, որ $1^1/_2$ վերստ անցաւ 2 ր. $17^3/_8$ վայրկեանում։

ԹԵՀՐԱՆ։ Շահի, պետական խնամակալի, եւրոպական գաղութի և շատ պարսիկների ներկայութեամբ կայացաւ Կուզմինսկիի առաջին թռիչքը Բլէրիօյի աէրօպլանով։ Մի քանի աջող պտոյտներ գործելով, Կուզմինսկին իջնելիս կոտրեց գործիքը։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

№ 4711.
ՎԱՐԴԻ ԲԻՒՐԵՂԵԱՅ ՍԱՊՈՆԸ
Գործ են ածում ամենքը, որոնք գիտեն գնահատել գեղեցկութիւնը։
Միակ գործարանատէր

ՖԵՐԴ. ՄՒԼԳԷՆՍ Փարֆիւմ էրիա № 4711. Կեօլն. Ռեյն. հիմն. 1792 թ.
Հասրի գինը 25 կոպ.

Շնորհիւ իր մէջ պարունակող մեծ քանակութեան գլիցէրինի, «№ 4711 վարդի բիւրեղեայ սապոնը» կանոնաւոր գործածողները պարտական են նրան իրանց՝ պատանեկան հասակին յատուկ՝ երեսի գոյնով, թաւշի նման կակուղ, մաքուր և քնքոյշ կաշւով, որոնք իսկական գեղեցկութեան նշանաբանն են կազմում։

Զարմանալի կակուղ փրփուր։ Հիանալի հոտ։ Մեծ տնտեսութիւն։ Իսկականը միայն բոլոր պետութիւն յայտարար. «№ 4711» մարկայով։

(M. 358723) 9—9

ГОЛОВНУЮ БОЛЬ и МИГРЕНЬ
РАДИКАЛЬНО УСТРАНЯЕТЪ
„МИГРЕНО-НЕРВОЗИНЪ“
БЕЗУСЛОВНО ВѢРНОЕ и БЕЗВРЕДНОЕ РАСТИТЕЛЬНОЕ СРЕДСТВО.
ТРЕБОВАТЬ въ АПТЕКАХЪ и АПТ. МАГАЗ.
ТОЛЬКО НАСТОЯЩИХЪ ПОРОШКОВЪ
съ ПѢТУХОМЪ апт. А. ГОНСЕЦКАГО
въ Г. ПЛОЦКѢ по 10 коп. за шт.
ОСТЕРЕГАЙТЕСЬ ПОДДѢЛОКЪ! ФАБР. МАРКА
(В. 54178 39—19

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
ՅՕԳՈՒՏ „ՄՇԱԿԻ“ ՖՕՆԴԻ
հետևեալ գրքերը.
1) «ՄՇԱԿ» ԵՒ ՀԱՅ ԿԻՆԸ գ. 1 ր.
2) «ՄՇԱԿԻ» ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿԸ կազմեց Լ. Դանիէլեան » — 50 կ.
3) ՀԱՄԱԼԻ ՄԱՍԼԱՀԱԹՆԻՐԸ » — 30 կ.
4) ԿԱՅԷՆԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ, դրամա 5 գ. Աւ. Սաքելեանի » — 50 կ.
5) ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ «ՄՇԱԿԻ» («Մշակի» յոբելեանի առիթով «Տարազի» հրատարակած ալմանախ) 1 ր.
6) ԴՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I 1 ր.
Վերոյիշեալ հրատարակութիւններից մի-մի օրինակ պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։
(2) 10—4

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՏԸ
հրաւիրում է նրանց, որոնք կը ցանկանան Կոմիտէտի բրդամանարանի կարիքների համար 1914 թ. ընթացքում մատակարարել 5000 փութ բուրդ։ Գրաւոր յայտարարութիւնները՝ փակ ծրարներով՝ ընդունվում են Կոմիտէտի դիւանատանը (Թիֆլիս, Մուշտայիդ այգում) ամեն օր, բացի տօն օրերից, առ. ժամը 10-ից մինչև ցեր. ժամը 3-ը։ Վերջնական, առանց կրկնաճուրդի, աճուրդը նշանակված է յունվարի 10-ին, ցեր. ժամը 12-ին Կոմիտէտի դիւանատանը։ Մատակարարման պայմանների և պահանջվող բրդի նմուշի հետ կարելի է ծանօթանալ նոյն տեղը լի օրերը՝ որոշված ժամերին։
1193. 2—2

ՄԵՂՐ
Ա. ՄԻԽԻԹԱՐԵԱՆԻ
մեղուանոցից։ Վաճառվում է Կովկասեան Կայսերական Գիւղատնտ. Ընկ. շինութեան մէջ, Ալէքսանդրեան այգում։
(օ. մ.) 1212. 3—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
„ԾԻԾԱՂԻ ՏԿՃՈՐ“

Անեկդօտների և սրախօսութիւնների ու Մօլլա Նասրէդդինի ընտիր առակների ժողովածու։ Գրքի երեսին այս նկարը մեծ գիրքով։ Գինն է 20 կոպ.։ Դիմել Թիֆլիսի հայ. գրավաճառներին և կազմողին՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. А. Г. Есаянцу. Գրքի գինը և ճանապարհի ծախսը 9 կոպ. մարկաներով ուղարկել առաջուց։ Գումարով ուզողներին 100 հատը կէս գնով, այսինքն 50% զեղչ. 50 հատին 40% զեղչ. 25 հատին 30% զեղչ։ Ճանապարհածախսը գնողի վրա։ Գումարով ուզողները պէտք է ղրկեն կանխավճար, մնացեալը վերադիր վճարով։
(օ. մ.) 1047. 20—16

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Լեւոն Բաշալեանի
„ԾԱՆՐ ԵՐԱԶ“
Պիէսը 4 գործողութեամբ։
Գինն է 50 կ.
Դիմել՝ Тифлисъ, книжн. магазинъ «Гутенбергъ», Г. Галстяну.
(օ. մ.) 1155. 10—8

ԲԱՑՎԱԾ Է
Հայոց Ազգագրական Ընկերութեան
„Ազգագրական Հանդէսի“
1914 թ. XXVI և XXVII գրքերի
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
Այս տարվայ երկրորդ (XXV) գիրքը լոյս կը տեսնի առաջիկայ տօներին։
Բաժանորդագինն է չորս գրքինը՝ (XXIV—XXVII) 5 ր., երկու գրքինը՝ (XXVI—XXVII) 3 րուբլի։
Դիմել՝ Въ Редакцію «Азгаграканъ Андесъ» Тифлисъ. 1205. 2—2

Выигрышные билеты
Государственныхъ займовъ
Послѣ одного взноса покупатель участвуетъ въ ближайшемъ тиражѣ выигрышей:
При взносѣ въ 6 р.—$^1/_{20}$ части 10-ти билетовъ.
При взносѣ въ 10 р.—$^1/_{10}$ части 10-ти билетовъ.
Взносы можно присылать и почтовыми марками.
Банкирскій Домъ Л. В. ЛАНДАУ и К°
Варшава, Братская 18.
Главное Агентство: Москва. Малая Лубянка, 3.
ГЛАВНЫЙ ВЫИГРЫШЪ
200.000
тиражи выигрышей:
I-го з. 2-го Января 1914 г.
II-го з. 1-го Марта „ „
III-го з. 1-го Мая „ „
(Вил. 66850) 7—6

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Ն. Վ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Գոյութիւն ունի 1895 թ.
Հեղինակ առևտրական հաշւապահութեան ձեռնարկի և զանազան մասնագիտական ձեռնարկների։ Տալիս է երկու սեռի անձանց մասնագիտական առևտրական գիտութիւն 4-ԱՄՍԵԱՅ ԴԱՍԸՆԹԱՑՔՈՎ, ամենօրեայ պարապմունքներով։
Դասընթացքներում անցնում են.—Առևտրական և արդիւնաբերութեան զանազան ճիւղերի հաշւապահութիւն, նիւթարդիւնաբերութեան և նիւթագործութեան ճիւղի հետ միասին, զանազան մեթօդներով, կատարեալ իրացումն կրկնակի իտալական սիստեմով և առևտր. թղթաբանութիւն, առևտր. նամակագրութիւն մայրենի և առևտրական իրաւունքներ, քաղաքատնտեսութիւն, վատ ձեռագրի ուղղումն։
Ոչ պարտադիր առարկաներն են՝ 1) Օտար լեզուներ, 2) Ստենօգրաֆիա (սղագրութիւն) և 3) Ռեմինգտօնի վրա գրել։
Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսականապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին։
Վկայագրերը տրվում են մինիստրութեան թոյլտւութեամբ։
Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ից 1914 թ.։ Խնդրագիրների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9—11-ը, երեկոյեան 5—7-ը. Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ձրիաբար։ Դասընթացքներին կից հաստատված են քիչ պատրաստված անձանց համար առանձին պատրաստողական և լրացուցիչ դասարաններ ռուսաց լեզուի և թւաբանութեան համար։
Անձամբ և նամակներով դիմել՝ Тифлисъ, Учредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамяну, Николаевская, 22, Телефонъ 7—44.
(կ. հ. ե.) 1153. 0—6

Ս.-Պետերբուրգի Պետական Կոնսերվատորիայի Գեղարուեստական Խորհրդի
ԴՐՈՒԱՏՄԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ
Հայ դպրոցների III (երկրորդ կիսամեակից) և IV բաժանմունքների
ԵՐԳ-ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ
Առաջարկում ենք մեր նոր լոյս տեսած
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԸ
Ա. մաս՝ դիատոնիզմ. — Գինը 35 կոպ.
Դիմել բոլոր գրավաճառներին։ Պահեստը «Գիր» գրախանութ։
1182. 7—3 (ե. շ.) Ռոմանոս Մելիքեան, Ազատ Մանուկեան

Առևտրի և Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայլեան պր. 24/4. Տելէֆօն № 976.
Տալիս են երկու սեռի անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։
Գործնական պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Լոնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են իսկ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, (անճոռնի ձեռքի ուղղումն), արագագրութիւն. բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Սղագրութիւն. 3) Դակտիլոգրաֆիա (ռեմինգտոն և այլ.) և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և զատ-զատ։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը փիրմաներին յանձնարարում են հաշւապահներ, օգնականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից, և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 284 ունկնդիր, որոնցից 53 հոգի իգական սեռից)։
1151. 0—11

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный